

Bhagavadgita, kam cranelu...

ԲՅԱԳԱՎԱԴԳԻՏԱ
ԿԱՄ
ԵՐԱՆԵԼՈՒ ԵՐԳԸ

արգմանեց Հնդկերէնից
Տ. Կնսերէնի համեմատութեամբ
ՀՐԱԶՆԱՅ Թ. ԱՃԱՌԵԱՆ

Արտատպած «Արարտ» ամսագրից

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Եկեքեաւարժ Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1911

3RPP
1R2V
1200
1200

Բ Հ Ա Գ Ա Վ Ա Դ Գ Ի Տ Ա

Կ Ա Մ

Ե Ր Ա Ն Ե Լ Ո Ւ Ե Ր Գ Ը

Հնդկական երկու ազգակից ցեղերի մէջ պատերազմ կար. Թշնամի բանակները շարուած էին միմեանց դէմ: Պանդաւաների զօրապետ Արջունան գթասրտութեամբ շարժուած՝ չէր ուզում կռուել իր ազգակիցների դէմ. նրա զօրավարներից մէկը՝ Կրիշնա, որ Աստուծոյ իններորդ և վերջին մարմնացումն էր, մէջտեղ է գալիս, խօսում է Արջունայի հետ, յորդորում է նրան վարել արդար կռիւը, և այս առթիւ բացատրում է Աստուծոյ, Հոգու, Մարդկային կեանքի ու վախճանի, երկրային ու երկնային կեանքի և այլ գաղտնիքներ: Յանջայան, որ լսում է նրանց, պատմում է մեզ այս գրքով Կրիշնայի և Արջունայի խօսակցութիւնը:

Հնդկերէն բնագիրը ոտանաւոր է. մեր արձակ թարգմանութեան մէջ հնդկերէնի իւրաքանչիւր տունը սկսում ենք նոք տողով. թարգմանութեան մէջ աշխատել ենք բոլորովին հաւատարիմ լինել բնագրին, պահելով մինչև իսկ, որքան կարելի է, բնագրի շարադասութիւնը և մրցելով միշտ հնդկաց սրբազան լեզուի (Սանսկրիտերէնի) ճոխութեանց հետ: Տեղ տեղ աւելացրել ենք մեր կողմից ծանօթութիւններ՝ հնդկական աշխարհին անծանօթ ընթերցողին օգնելու համար:

Հ. Աճառեան.

ԲՀԱԳԱՎԱԳԻԳԻՏԱԿԱՄ ԵՐԱՆԵԼՈՒ ԵՐԳԸ

07մ)

Ա.

ԴՈՐՏԱՐԱՄՇՏՐԱՆ ԽՍՈՒՅԳ.

Կուրուքշեարայի սուրբ դաշտում կուռեցու համար հաւաքուած մեր զինւորներն ու Պա՛նդաւաները ի՞նչ արին, ո՛վ Սանջայա:

Սանջայան ԽՍՈՒՅԳ.

Տեսնելով Պանդաւանների ռազմական ճակատը, Դուրյոդհանա թագաւորը մօտեցաւ իր ուսուցչին և այսպէս խօսեց.

«Նայի՛ր, ով իմ ուսուցիչ, պանդուի որդիների այս մեծ բանակը, որ ճակատէ՛ յարդարած Դրուպադայի ճարպիկ որդու՝ քո աշակերտի ձեռքով:

«Այնտեղ են մեծադեղն հերոսներ՝ Բհի՛մա և Արջունա մարտիկների նման, ինչպէս Եուրուդհանա Վիրատա և մեծակառքն Դրուպադա,

«Դհրշտակետու, ճէկիտանա, Կաշիի կտրիճ թագաւորը, Պուրուջիտ, Կունտիբհ՛ջա և Շեվիայի իշխանը,

«Կտրիճն Եուրդհանանու, դիւցազն Ուտտամաջա, Սաթւհադայի և Դրասպադիի որդիները, բոլորն էլ մեծամեծ կառքերով:

«Նայի՛ր նոյնպէս մերոնց կտրիճները, ո՛վ բարձրագոյն Բրահման2)». ես կանուանեմ իմ բանակի առաջնորդներին յիշեցնելու համար քեզ.

«Դու, Բհիշմա, Կարնա, յաղթականն Կրպա, Աշվատթամա, Վիկարնա, նոյնպէս Սոմադատտայի որդին.

«Եւ ուրիշ ռազմաթիւ հերոսներ, անձնազոհ ինձ համար, բոլորն էլ լիազէն ու ռազմազէտ.

«Անթիւ է մեր բանակը Բհիշմայի առաջնորդութեան տակ, բայց թուելի է նրանցը, որի առաջնորդն է Բհի՛մա:

4) Օ՛մ Աստուծոյ սրբազան կոչականն է, ինչպէս է կամ Որ էն.

2) Բրահմա նշանակում է Աստուած. իսկ բրահման բառնայ:

«Ձեզանից իւրաքանչիւրը թող պահպանի իրան ընկած տեղը. և բոլորդ պաշտպանեցէք Բհիշմային»:

Նրանց սրտերը ոգևորելու համար, կուրուների նախապապը առիւծի նման մռնչեց և հնչեցրեց խեցեայ շեփորը:

Եւ իսկոյն խեցեայ շեփորները, սրինգները, դավերն ու թմբուկները բոլորը հնչեցին մեծաթխոր աղմուկով:

Եւ այն ժամանակ սպիտակ ձիերով լծուած մեծ կառքի մէջ կանգուն՝ Մադհուի սպանողը¹⁾ և Պանդուի որդին²⁾ փչեցին իրանց երկնային շեփորը:

Իսաախուիւ ռազմիկը փչեց հսկայ դալարափողը, շարստու-թեանց յաղթական դիւցազնը փչեց առտուամծային շեփորը, Գայլորովայնն Բհիմա, որի գործերը զարհուրելի են, փչեց եղեգնեայ մեծ շեփորը,

Կունտիի որդին, Եուդհիշտիւրա, բռնած էր Յաղթական շեփորը, Նակուլա և Սահադէվա կրում էին Քաղցրահնչիւն շեփորն և դհարազարդ ու ծաղկազարդ փողը:

Կանչի գեղեցկազնն թագաւորը, մեծակուռն Շիկանդին, Դհրշտադհուդա, Վիքատա և անպարտելին Սահակի,

Դրուպադա և բոլոր Դրուպադեանները, երկրի իշխաններ, և սաօրհադրայի հաստաբազուկ որդիները հնչեցրին իրենց շեփորները մի առ մի:

Այն ժխորը Դհրտարանշտրայի որդիների սրտերը պատուելով, երկնքն ու երկիրը դղրդում էր:

Այն ժամանակ ճակատած տեսնելով Դհրտարանշտրայի որդիներին, Պանդուի կապկադրոշ գիսախուիւ որդին երբ նետե-րը ճայթում էին. վերցրեց իւր աղեղը՝

Եւ այսպէս խօսեց Կրիշնային. «Երկու բանակների մէջ տեղում կանգնեցրու իմ կառքը:

«Որպէս զի տեսնեմ ես ինձ դէմ կռիւ ուղողներին, որոնց հետ մենք պիտի մարտնչենք այս մահացու կռուի մէջ,

«Որպէս զի նկատեմ ես, թէ որո՞նք են այստեղ հաւաքուած պաշտպանելու Դհրտարանշտրայի եղեռնագործ որդուն կռուով»:

Սանջայեան Խօսեց.

Երբ այսպէս խօսեց Արջունան, գիսախուիւն Կրիշնա եր-

1) Կրիշնայի տիտղոսներն են Մադհուի սպանող. գիսախուիւ. հե-րարծակ մարտիկ. հովուապետ. Հարի, սպանող Կիշինի եւ այլն:

2) Արջունայի տիտղոսներն են Պանդուի որդի, Կունդիի որդի Թշնամիների յաղթական. Բհարատա. Պրիթայի որդի. Կուրուի որդի եւլն:

կու ըսնակաների մէջտեղ կանգնեցրեց դեղեցիկ կառքը,

եւ Բհիշմայի, Դրոնայի ու բոլոր իշխանների դէմ՝ աջապէս ասաց. «Ո՛վ իշխան, նայի՛ր այստեղ հաւուքուած բոլոր Կուրուներին».

Այն ժամանակ նայեց Արջունան և տեսաւ հացրեր, պապեր, ուսուցիչներ, մօրեղբայրներ, եղբայրներ, որդիներ, թոռներ, ըարեկամներ,

Փեսաներ և ընկերներ երկու ըսնականների մէջտեղ: Տեսնելով Կունդիի որդին այս բոլոր աղգածիցներին կռուի կանգնած,

Խոր գթութեամբ զգացուած, այսպէս խօսեց վշտահար.

ԱՐՋՈՒՆԱՆ ԽՈՍԵՑ.

«Տեսնելով այս աղգականներին, ո՛վ Կրիշնա, կռուի կանգնած և ճակատ յարդարած, իմ անդամները թուլանում են, դալկանում է իմ երեսը, իմ մարմինը սարսուլած է, փշաքաղւում են իմ մազերը,

Աղեղս ձեռքից վայր է ընկնում, մորթս ամբողջ այրւում է, ոտի կանգնել չեմ կարողանում և իմ միտքը տատանւում է:

Ես զգում եմ չարաշուք գուշակութիւններ, ո՛վ հերարձակ մարտիկ, և ոչինչ լաւ բան չեմ նկատում այս եղբայրասպան կռուի մէջ:

Ոչ յաղթութիւն եմ ուզում, ո՛վ Կրիշնա, ոչ թագաւորութիւն, ոչ հաճոյք, ինչ բարեք ենք օտանում մենք թագաւորութիւնից, հաճոյքներից և նոյն իսկ կեանքից:

Նրանք՝ որոնց համար մենք պիտի ցանկանայինք թագաւորութիւն, հաճոյք և հարստութիւն, նրանք այստեղ կռուի են շարուած, արհամարհելով իրանց կեանքն ու հարստութիւնը.

Ուսուցիչներ, հայրեր, որդիներ, պապեր, մօրեղբայրներ, իեսաներ, թոռներ, աներորդիներ ու խնամիներ:

Թող ինձ սպանեն, ես չեմ ուզում իրանց մահը, մինչև իսկ եթէ երեք աշխարհների թագաւորութիւնն ինձ տան. ո՛ւր մնաց երկրի:

Սպանելով Դհրիտաքաշտրայի որդիներին, ինչ հաճոյք պէտք է օտանանք մենք, ո՛վ դիւցազն. բայց մեղքը պիտի կապուի մեր վրին, եթէ սպանենք նրանց. թէև մահապարտ լինեն:

Մեղ արժան չէ ուրեմն սպանել Դրտարաշտրայի որդիներին, մեր աղգականներին, որովհետև կոտորելով մեր աղգատու մը, ուրախ պիտի լինինք մենք:

Եթէ սրանք չեն տեսնում իրանց կուրացած հոգով աղգասպանութեան և ըարեկամներին լլկելու մեղքը,

Մենք էլ յետ չալիտի դառնանք այս մեղքից, գիտենալով հանդերձ ազգասպանութեան չարիքները:

Ընտանիքի ջնջումով ջնջուում են և ընտանիքի յաւիտեանահան օրէնքները: օրէնքների ջնջումով ամբողջ ընտանիքը անօրէնութեամբ պաշարւում է:

Անօրինութեամբ, ո՞վ Կրիշնա, հանապք ապականւում են և կանանց ապականութեամբ, ո՞վ Հովուապետ, ծնւում է դասակարգային խառնութիւնը:

Եւ այս խառնակութեամբ դժոխքն են ընկնում ոճրագործները և նոյն իսկ ընտանիքի հայրերը, զրկուելով սրբազան հարկաւորագիր և ջրի ընծայաբերութիւնից:

Եւ այսպէս, ազգասպանների մեղքով՝ որ խառնակում է դասակարգերը, ջնջւում են ցեղերի և ընտանիքների յաւիտեանահան օրէնքները:

Իսկ այն մարդիկ, որոնց ընտանեկան զոհաբերութիւնները ջնջուած են, նրանց բնակարանը անշուշտ դժոխքն է: Այսպէս են ուսուցանում մեզ Ս. Գրքերը:

Ո՛հ, մի մեծ մեղք գործադրել մենք կը վճռենք, եթէ թաւաւորութեան հաճոյքի հրապոյրով սպանել վճռենք մեր ազգակիցներին:

Եթէ ինձ զինաթափ ու անպաշտպան Դհրտարանշտրայի զինուած որդիքը պատերազմում պպանէին, աւելի երանելի կը լինէր ինձ համար:

Ամենայան խօսեց

Այսպէս խօսելով Արջունան բանակամիջում, կառքի վերայ նստեց, բաց թողնելով իր նետն ու աղեղը, և հոգին յուզողաճ վշտեց:

Այստեղ վերջանում է բնագավազդի՛ճա՛յի առաջին գլուխը, որի անգլանն է Արջունայի վիճար:

Բ.

Ապնջայան խօսեց.

Մինչդեռ գթով զգացուած և աչերն արտասուակից, թուլանում էր Արջունա, այսպէս խօսեց Կրիշնան:

Կրիշնան խօսեց.

Ո՞րտեղից է պատերազմի մէջ քո այս վրդովմուռնքը, որ

անարժան է Արիաներին, հակառակ երկնից և ամօթաբեր, ո՛վ Արջունա:

Մի՛ մեղկանար, Արջունա, դա քեզ վայել չէ. նետի՛ր սըրտիդ ամօթալի թուլութիւնը և Վե՛ր կաց, ո՛վ թշնամիների յադթականը:

Արջունան խօսեց.

Ի՜նչպէս Բհիշմայի ու Դրոնայի դէմ, ո՛վ Կրիշնա, կռուի մէջ նետեր արձակեմ ես, որ պատուել Վարտաւոր եմ նրանց:

Մեծայարդ անձնաւորութեանց սպանութեան փոխարէն՝ աւելի լաւ էր մուրացած հացով ապրել այս աշխարհում. Բայց մինչև իսկ եթէ մի ագահ անձնաւորութիւն սպանէի ես, դարձեալ արիւնոտ հացով պիտի ապրէի:

Մենք չգիտենք, թէ ո՞րն է աւելի լաւ, յաղթե՛լ թէ յաղթուիլ: Մարդիկ, որոնց սպանութիւնը պիտի տար մեզ ատել կեանքը, դրանք են կանգնած մեր դէմ. այն է Դհրասաւաճշտրայի որդիները:

Հոգիս համակուած գթութեամբ և մեղքի երկիւղով՝ քեզ եմ հարցնում, անգիտակ արդարութեան: Ո՞րն է լուազոյն միջոցը. ասո՛ւ ինձ. ես քո աշակերտն եմ. ոովորեցրո՛ւ ինձ իմ հարցը:

Որովհետեւ ես չեմ իմանում, թէ իսկի մի բան ինձանից կարո՞ղ է վանել այս ցաւը՝ որ իմ զգայարաններս այրում է. մինչև իսկ եթէ ունենայի երկրի վրայ մի ընդարձակ թագաւորութիւն առանց թշնամու, նոյն իսկ Ասաուաճների տէրութիւնը:

Սանջայան խօսեց.

Այսպէս խօսեց Կրիշնային Արջունան և յայտնելով թէ «ես չեմ կռուիլ», լռեց:

Այն ժամանակ խօսեց Կրիշնան ժպտալով, երբ երկու բանակների մէջտեղ վշտահար մտնում էր Արջունան:

Կրիշնան խօսեց.

Դու լալիս ես նրանց՝ որոնց վրայ լալ պէտք է չէ. թէև քո խօսքերը իմաստութեան խօսքեր են: Ոչ կենդանիներին են լալիս իմաստունները և ոչ մեռելներին:

Ձէ եղել երբէք, որ ես գոյութիւն չունենայի, ոչ էլ դու, ոչ էլ այս իշխանները. և երբէք չպիտի լինի, որ մենք դադրենք գոյութիւնից ապագայում:

Ինչպէս մահկանացու մարմնի մէջ յաջորդում են իրար

մանկութիւն, երիտասարդութիւն և ծերութիւն, նոյնպէս յետոյ հոգին ստանում է մի նոր մարմին, և իմաստունը չի տագնապում այստեղ:

Տարրերի հանդիպումը, որ առաջացնում է ցուրտ, տաք, հաճոյք և ցաւ, ունի վերադարձ և երբէք չէ յաւիտենական: Տոկա՛ նրանց, ո՛վ Կուէնտի՛ր որդի:

Նա, որին չեն խռովում սրանք, նա, որ անխռով է թէ հաճոյքի և թէ ցաւի մէջ, նա մասնակից է դառնում անմահութեան:

Նա որ չկայ, չի կարող լինել և նա, որ կայ՝ չի կարող չլինել. այս երկուսը ճանաչում են այն իմաստունները, որոնք ճանաչում են ճշմարտութիւնը:

Գիտցի՛ր թէ անջնջելի է նա՝ որով գոյացել է այս ամբողջ տիեզերքը. ջնջումն անջնջելին՝ ոչ ոք չի կարող առաջացնել:

Այս փոփոխելի մարմինները առաջանում են յաւիտենական, անջնջելի և անփոփոխական մի հոգուց: Կուէ՛ր ուրեմն, ո՛վ Բհա՛ւրատա:

Նա, որ կարծում է թէ սպանում է, և նա որ կարծում է թէ սպանւում է, սրանք երկուսն էլ սխալւում են. նա չի սպանում, նա չի սպանւում:

Նա երբէք չի ծնւում, նա երբէք չի մեռնում. նա չի գոյացել, նա չի գոյանալու. անծին, անվախճան, յաւիտենական և անսկիզբն, նա չի մեռնի՝ երբ մեռցնեն մարմինը:

Նա որ անջնջելի, յաւիտենական, անծին և անվախճան գիտէ նրան, կարող է սպանել մէկին, կամ սպանել տալ:

Հին զգեստները ինչպէս հանում է մէկը՝ նորերը հագնելու համար, նոյնպէս հոգին հանում է հին մարմինները, ուրիշ նորերն հագնելու համար:

Նրան չեն թափանցում նետերը, նրան չի այրում բոցը, նրան չեն թրջում ջրերը, նրան չի շորացնում քամին:

Անթափանցելի, անկիզբելի, անթրջելի, անշորանալի, յաւիտենական, ամենուրեք, անշարժ, անայլոյլ, անեղծանելի:

Անտեսանելի, անճառելի անփոփոխելի. ահա իւր ստորագելիքը, եթէ դու նրան այսպէս գիտես, մի՛ լար ուրեմն նրան:

Եթէ նրան գիտենայիր իսկ յաւիտենականապէս ծնանելի և մահանալի, դարձեալ չպիտի լայիր նրան:

Որովհետեւ՝ ով ծնում է պիտի մեռնի, և ով մեռնում է պիտի ծնի. ինչո՞ւ ուրեմն չի կարելի խափանել, լաց մի՛ լինիլ նրա վրայ:

Անըմբռնելի է էակաների սկիզբը, ըմբռնելի է միայն միջոցը, անըմբռնելի է նաև վախճանը. ինչ կայ այստեղ արտասուելի:

Իբրև սթանչելիք նայում է մէկը կեանքին, իբրև սթանչելիք ճառում է միւսը կեանքից, իբրև սթանչելիք լսում է ուրիշը նրան, և երբ լսում ենք, ոչինչ չգիտենք:

Հոգին անեղծ ընտկում է ամեն կենդանի մարմնի մէջ. բոլոր այս էակներին դու չես կարող անշուշտ լալ:

Քո պարտականութեանը նայիր և մի՛ խոսվիր. արդար պատերազմից դուրս Վշատրիայի ¹⁾ համար ոչինչ լուռ բռն չկայ:

Երկնքի գուռը բացւում է երջանիկ Վշատրիաների համար մի այսպիսի պատերազմի մէջ, որ ներկայտնում է ինքնին:

Եւ եթէ դու այս արդար պատերազմը չմղես, քո պարտականութիւնը և քո պատիւը մերժելով, մեզք կը գործես:

Եւ քո անպատուութիւնը մարդիկ կը պատմեն միշտ. զգայուն մարդու համար անպատուութիւնը մահից աւելի վատ է:

Երկիւղիցդ կռուից փախած պիտի կարծեն քեզ իշխանները. և նրանք, որ քեզ մեծահոգի էին կարծում, պիտի արհամարհեն:

Բաղում թշնամանքներ պիտի տեղան քեզ վերայ քո թըշնամիները, և պիտի նախատեն քո անկարողութիւնը, սրանից աւելի ծանր ի՞նչ կայ:

Եթէ մեռնես, երկինքը պիտի շահես, եթէ ապրես, պիտի տիրես երկրին. ուրեմն վե՛ր կայ, ո՛վ Վուռնաիի որդի, կռուելու վճռականօրէն:

Հաճոյք և ցաւ, շահ և վնաս, յաղթութիւն և պարտութիւն նոյնը համարիր. նուիրի՛ր քեզ կռուին. և այսպէս պիտի խուսափես մեղքից:

Ահա քեզ բացատրեցի Սանրիայի ²⁾ գիտութիւնը. այժմ Եօգայի ³⁾ վարդապետութիւնը լսիր, որին յարելով դու գործերի կապը դէն կը ձգես:

Ձկան այստեղ զուր ճիգեր, վնասներ չկան. մի նշոյլն այս օրէնքին ազատում է մեծագոյն սարսափից:

1) Վշատրիա՝ գինուորական դատակարգին պատկանող, միւս երեք դատակարգերն են՝ բրահմանի (կրօնական դատակարգ), Վոյիթարների երկրագործ, վաճառական ու արհեստաւոր դատակարգ, Սոտրաներ (ստրուկներ):

2) Բանապաշտ ինքնահայեցողական վարդապետութիւն:

3) Հոգու խորհրդաւոր միացումը գերագոյն Աստուծոյ հետ:

Հաստատունն է այս վարդապետութիւնը և մի՛ նպատակ ունի. մի անհաստատ վարդապետութիւն անվերջ ճիւղաւորւում է:

Այս ծաղկալիթիթ խօսքով պարծենում են տղէտները, որ Վեդաներիցն¹⁾ է. «էլ ուրիշ բան չկայ», ասում են նրանք:

Անձնատուր հաճոյքի, միայն երկնապաշտ, ընդունում են այդ Գիրքը, որ վերականգանութիւնը համարում է իբր գործերի վարձք, և ծէսերի առատութեամբ տալիս է հարստութիւն և իշխանութիւն:

Հարստութեան և իշխանութեան սիրող այս մարդիկ, մոլորուած այս խօսքով, ինքնահայեցողութեան միակ հաստատունն վարդապետութիւնը չեն ճանաչում:

Երեք յատկութիւններ կան Վեդայի մէջ. ազատ եղիւր այդ երեք յատկութիւններէց, ո՛վ Արջունա. հոգիդ անբաժանելի, հաստատուն և ինքնիշխան թող լինի. միակ մտածմունքդ երջանկութիւնը չլինի:

Ինչքան առատութիւն է մի աւաղանում, սրի ջրերն ամէն կողմէց հեղեղում են, նոյնքան նիւթ կայ ամբողջ վեդաներում Բրահմանի համար:

Գործերիդ ուշադիր եղիւր և ոչ երբէք նրա վարձատրութեան համար. բայց մի՛ խուսափիր գործից.

Եօդայով հաստատուն՝ գործի՛ր, գէն ձգելով ցանկութիւնը. յաջողութեան առաջ անտաքքեր եղիր. Եօդան հոգու անտարբերութիւն է սովորեցնում:

Աւելի ստոր է գործը Եօդայից. խոկման մէջ յորնիր քո ապաւէնը. թշուառ են վարձատրութեան սպասողները:

Խոկման անձնատուր մարդը ազատւում է բարի և չար գործերից. ուրեմն ընդունիր Եօդան. Եօդան գործերի մէջ երջանկութիւն է գնում:

Խոկման անձնատուր իմաստուն մարդիկ գործերի վարձատրութիւնը թողնելով, և խոստովելով ազգապանական կապերից՝ գնում են փրկութեան ապաստանարանը:

Երբ մոլորութեան մութ սահմաններն անցնի քո միտքը, այն ժամանակ դու կարող կը լինիս արհամարհել անցեալ և ապագայ վէճերը:

Երբ այս սկզբունքներէց հեռու մնալով, քո հոգին անգրգռելի և հառապտուն դառնայ հայեցողութեամբ, այն ժամանակ դու կը հասնես Եօդային:

1) Ա. Գիրք Հնդկաց. որի չորս մասերն են. Ռիգ. Եաջուր. Սամա. Աթարվա:

ԱՐԵՎՈՆԱՆ ԽՍՈՒՅԳ:

Իմաստութեան և ինքնահայեցողութեան մէջ կատարեալ մարդու նշանը ո՞րն է. նա ի՞նչպէս մտքով անշարժ է խօսելիս, հանդէսէ զորճելիս:

ԿՐԻՇՆԱՆ ԽՍՈՒՅԳ.

Երբ հրաժարուում է բոլոր ցանկութիւններէց, որ հոգին են թափանցում, երբ ինքն իրանով է երջանիկ այն ժամանակ նա կատարեալ իմաստուն է կոչւում:

Երբ անայլայլ է ձախորդութեան մէջ, երբ ջնջել է սէր, երկիր, բարկութիւն, այն ժամանակ նա կոչւում է կատարեալ իմաստուն մենակեաց:

Երբ նա չի զգածւում ոչ մի բանում, ոչ բարեքի և ոչ չարեքի մէջ, ոչ ուրախանում է, ոչ բարկանում, նրա իմաստութիւնը կատարեալ է:

Արիայի պէս, որ իր անդամները իրան է քաշում, եթէ նա իրան քաշէ իր զգայարանները զգայութիւններից, նրա իմաստութիւնը կատարեալ է:

Ժուժկալ մարդուց յետ են փախչում առարկաները, հոգու զգայութիւնները յետ են փախչում այն մարդուց, որ թողել է նրանց:

Սակայն երբեմն անզուսպ կրքերը բռնի քաշում են նաև ամէնից ժուժկալ իմաստունի հոգին:

Նրանց զսպելուց յետոյ, թող նա նստի միտքը յառած ինձ. և երբ նա իր զգայարաններին նուաճել է, նրա իմաստութիւնը կատարեալ է:

Երբ մարդ նայում է զգայական առարկաներին, նրա մէջ հակում է ծնւում գէպի նրանց. և այդ հակումից ծնւում է ցանկութիւնը. և ցանկութիւնից ծնւում է կիւրքը:

Արքից առաջանում է մտքի շփոթութիւն, մտքի շփոթութիւնից խելացնորութիւն, խելացնորութիւնից բանականութեան կորուստ. և բանականութեան կորուստով նա կորած է:

Բայց երբ մարդ մօտենում է զգալի առարկաներին զուրկ սիրուց և ատելութիւնից, հպատակութեամբ և համակերպութեամբ, նա գէպի անդորրութիւնն է գնում:

Անդորրութիւնից ծնւում է նրա մէջ բոլոր ցաւերի հեռացումը. անդորրութեամբ իր բանականութիւնը հաստատուում է:

Իմաստուն չէ Եօգային չհետեողը: Եօգային չհետեողը չի խոկալ. ով չի խոկայ, չունի հանգիստ. և անհանգստին ո՞ւր է երջանկութիւն:

Ով զգայարանների մոլորութեան է յանձնում հոգին, նրա քանականութիւնը քշւում է ինչպէս նաւը քամիներից ջրերի վրայ:

Այոպէս ուրեմն նա, որի զգայարաններն ամէն կողմից փակուած են զգայական առարկաների առաջ, կատարեալ իմաստուն է:

Ուր գիշեր է ըստ արարածների համար, արթուն է ինքնազոռաց մարդը. և ուր արթուն են արարածները, գիշեր է իմաստուն մենակեացի համար:

Մշտագեղուն անփոփոխ Ովկէանի մէջ կորչում են գետերը. և մարդը, որի մէջ կորչում են ցանկութիւնները ըստ խաղաղութիւնն է գտնում. բայց ոչ հաճոյստէրը:

Վանելով ըստ ցանկութիւնները, թող մարդը գնայ առանց ցանկութեան, առանց տենչանքի, առանց հպարտութեան. նա դէպի խաղաղութիւնն է գնում:

Ահաւասիկ աստուածային հանգիստը. ով նրան հասաւ՝ չի տանջւում. և ով մնաց նրա մէջ մինչև վերջին օրը, նա չի ջանում է ներվանայի մէջ ¹⁾

Այսեղ վերջանում է Բնագալաթի՛սա՛յի երկրորդ գլուխը, որի անունն է բանական գիթութեան Եօգա:

Գ.

Արջունան խօսեց.

Եթէ դու կարծում ես՝ թէ գործից աւելի ըարձր է միտքը, ինչո՞ւ ինձ այսպիսի մի զարհուրելի գործի ես դրւում:

Քո երկմիտ խօսքերից իմ միտքը կարծես պղտորուած է: Արտասանի՛ր միայն մի օրէնք, որով լաւագոյնին հասնէի ես:

Կրիւնան խօսեց.

Աշխարհումս երկու տեսակ կեանք կայ, որոնց մասին ես արդէն խօսել եմ. Սանքեաների համար գիտութեան Եօգա, և Եօգիներ ¹⁾ համար գործի Եօգա:

Ոչ մի գործ չգործելով՝ մարդ անգործ չի լինիլ. ոչ էլ հրաժարումով կեանքի նպատակին կարելի է հասնել:

Որովհետեւ ոչ մի էակ, մինչև իսկ մի ակնթարթ, չի մնում անգործ. գործում է նա ակամայ իր մարմնի ֆունկցիաներով:

¹⁾ Մարդկային հոգու վերջնական ծուլումը Աստուծոյ հոգու մէջ:

Ով զգայարանների գործունէութիւնը նուաճելով՝ մնում է անգործ, ըայց միտքն զբաղուած զգայական առարկաներով և խորհուրդները ցրուած, նա կեղծ բարեպաշտ է կոչուում:

Բայց նա, որ զգայութիւնները մտքով նուաճելով՝ բանացնում է զգայարանների գործունէութիւնը բարի գործի համար՝ ինքը քաշուած մնալով, նրան յարգում են:

Գործի՛ր ուրեմն օգտակար գործը. որովհետեւ գործն աւելի բարձր է անգործութիւնից. քո մարմինն անգամ գուշեա կարող սնուցանել անգործութեամբ:

Բացի սուրբ գործից՝ աշխարհը մեզ կապում է նաև ուրիշ գործերով. այդ գործը՝ ազատ ցանկութիւններից՝ գործի՛ր ուրեմն, ո՛վ Կաւնտի՛ի որդի:

Երբ զոհաբերութեամբ արարածներին ստեղծեց Արարչապետը՝ առաջ նրանց. շնորհով բազմացէք. դա թող լինի առատութեան հորթը:

«Աստուածներին սնուցէք նրանով և թող Աստուածները սնուցանեն ձեզ. այս ժողովարձ սնուցումներով գերագոյն բարիքը պիտի գտնէք:

«Մնանելով զոհաբերութեամբ՝ Աստուածները ձեզ պիտի տան հարկաւոր սնունդը. ով ուտում է աստուածասուր որսնունդը՝ նրանց մաս չհանած, նա գող է:

«Ովքեր զոհի մնացորդներն են ուտում, արձակուում են իրանց մեղքերից. իսկ չարագործները՝ որ սնունդ են պատրաստում միայն իրենց համար, մեղքով են սնանում»:

Արարածներն ապրում են բերքերից և բերքերը ծնում են անձրևից. անձրևը գալիս է զոհաբերութիւնից և զոհաբերութիւնը կատարւում է գործողութեամբ:

Դիտցի՛ր թէ գործողութիւնը ծնում է Բրահմայից և Բրահման Յաւիտենականից. ուստի ամենուրեքն Բրահմա միշտ զոհաբերութեան ներկայ է:

Ով կենաց շրջանառութեան չի գործակցում աշխարհի մէջ, և մեղքերով է ճաշակում զգայութեանց հաճոյքը, նա գուր է ապրում:

Բայց նա ար երջանիկ է ու գոհունակ ի՛ւր հոգու մէջ, իւր հոգու մէջ էլ գտնում է իր ուրախութիւնը և չի արհամարհում ո՛չ մի գործ:

Գործի խատարուելը կամ չկատարուելը իր հոգը չէ. և ոչ մի էակից նա օգնութիւն չի սպասում:

Ուրեմն միշտ քաջաւած՝ կատարի՛ր քո գործը. որովհետեւ

հրաժարմամբ կատարելով գործը՝ մարդ հասնում է գերագոյն նպատակին:

Ձանափան և ուրիշները գործով հասնան կատարելութեան. եթէ գու նկատես գործերի ամբողջութիւնը, կը պարտաւորուիս գործել:

Ինչ ձևով գործում է մի նշանաւոր մարդ, նոյն ձևով գործում է մարդոց մնացեալ մասը. նա օրինակ է տալիս, աշխարհ նրան հետևում է:

Ես էլ անելու ոչինչ չունիմ երեք աշխարհների մէջ և ոչ էլ ստանալու մի նոր բան, բայց գործում եմ:

Որովհետեւ եթէ ես չգործէի անդրդուելի գործունէութեամբ, բոլոր մարդիկ՝ որ հետևում են իմ ճանապարհին, պիտի կորչէին այս աշխարհի մէջ. եթէ ես չկատարէի իմ գործը, քաօս պիտի կազմէի և այդ արարածները պիտի ջնջուէին:

Ինչպէս որ տգէտները միացած են միմեանց գործով, նոյնպէս թող իմաստունը գործի՝ հրաժարուած աշխարհից, կազմելու համար աշխարհի կարգը:

Թող անհամաձայնութիւններ չծնուցանէ իրենց գործին նուիրուած տգէտների մէջ, այլ սիրեցնէ աշխատութիւնը՝ անձնատուր լինելով ու միանալով նրանց:

Բոլոր կարելի գործերը առաջանում են կենսանի էակաների բնական ստորոգելիքներից. մեծամիտը միայն կտառի. «Այդ գործը ես եմ արել»:

Բայց արդարաւոր՝ անձը, որ զանազանում է ստորոգելիքն ու գործողութիւնը, անում է. «Ստորոգելիքը ստորոգելիքին է վերաբերում», և հրաժարում է:

Նիւթի ստորոգելիքներով այլայլուած մարդիկ յարում են ստորոգելիքների գործողութեան. սոքա ընդհանուր չգիտցող ծանր ուղեղներ են. ով իմանում է՝ թող չխախտէ նրանց:

Բոլոր գործերը ինձ վերագրիր, մտածիր գերագոյն հոգու վրայ. և անյոյս ու անհոգ կռուիր առանց տխրութեան:

Այն մարդիկ, որ հետևում են իմ հրամանիս հաւատքով ու անտրտունջ, ազատում են նոքա էլ գործերի կապերից:

Բայց նոքա, որ տրտնջալով չեն հետևում իմ հրամանիս, իմացիր թէ զօւրի են ամէն գիտութիւնից և կորչում են անմիտ կերպով:

Իմաստունը ձգտում է իր բնութեան համաձայնող գիտութեան. անասուններն էլ իրենց. ով փորող է հաւառակը գործել:

Ձգայական առարկաները զգայարաններին տալիս են

ցանկութիւն կամ զգուանք. բայց իմաստունը չի հպատակում նրանց, որովհետեւ նոքա իր թշնամիներն են:

Լաւագոյն է սեպհական անկատար օրէնքը օտարի կատարեալ օրէնքից. լաւագոյն է մեռնել սեպհական օրէնքով. օտար օրէնքը վտանգաւոր է:

Արջունան խօսեց.

Ինչո՞վ գնում է մարդ մեղքի մէջ ակամայօրէն իւր մղուած օտար ուժից:

Կրիւնան խօսեց.

Դա սէրն է, դա կիրքն է՝ ծնուած տարտարոսից, գիշատիչ և մեղսալից. զիտցիր՝ որ նա թշնամի է աշխարհում:

Ինչպէս ծուխը ծածկում է բոցը և ժանգը հայելին, ինչպէս արգանդը պատում է սաղմը, այնպէս և նա պատում է այս աշխարհը:

Իմաստութիւնը ծածկում է նրանով. իմաստունի յաւիտենական թշնամին է. անյադ բոցի պէս նա ձեւփոխւում է ըստ հաճոյս:

Ձգայարանները, միտքը, բանականութիւնը նորա բնական արաններն են կոչւում. սոցանով մթագնում է գիտութիւնը և բանականութիւնը:

Ուստի քո զգայարանները հենց սկզբից ընկճիր, ո՞վ Բհաւ-բատայի գերագոյն որդի, և ջնջիր այս մեղապարտին, որ վնասում է գիտութեան և դատողութեան:

Ձգայարանները հզօր են, ասում են. զգայարաններից աւելի հզօր է միտքը, մտքից աւելի հզօր է բանականութիւնը. բայց բանականութիւնից աւելի հզօրը նա է:

Նրան բանականութիւնից աւելի հզօր իմանալով, զօրացրո՞ւ հոգիդ քո մէջ և սպանի՛ր թշնամուն, որ զանազանակերպ է և դժուարամատչելի:

Այսեղ վերջանում է Բհագավադգիտա՛յի երրորդ գլուխը, որի անունն է գործի Յօգա:

Դ.

Կրիւնան խօսեց.

Այս յաւիտենական Եօգան սովորեցրի նախ Վիվաովատին. Վիվաովատը սովորեցրեց Մանունին. Մանունն պատմեց Իկշվակունին:

Այսպէս փոփոխակի անցնելով Արքայական Իմաստունները սովորեցին. բայց դարերի ընթացքում Եօգան մոռացուեց:

Նոյնը ես այժմ քե՛զ եմ սովորեցնում, այդ հին մոռաց-

ցումած եօգան. «Իմ ծառան ես դու և իմ բարեկամը» ասացի
ես: Գերագոյն գաղտնիք է սա:

Արշունան խօսեց.

Յետնագոյն է քո ծնունդը. Վիվասովատի ծնունդը կան-
խագոյն է. ի՞նչպէս հասկանալ քեզ, երբ ասում ես «նախ
սովորեցրի Վիվասովատին»:

Կրիշնան խօսեց.

Բազմաթիւ են իմ ծնունդները. քոնն էլ, ո՞վ Աքշունա.
բայց ես նրանք բոլորը գիտեմ, միայն դու չգիտես:

Թէև անսկիզբն և անվախճան, արարածների տէրն եմ
ես, բայց իշխան իմ սեպհական էութեան, ծնւում եմ խոր-
հրդաւոր զօրութեամբ:

Ամէն անգամ երբ արդարութիւնը նուազում է և անար-
դարութիւնը գլուխ է բարձրացնում, այն ժամանակ մարմին
եմ զգենում:

Եւ բարիների պաշտպանութեան, չարերի հալածման և
արդարութեան վերականգման համար ծնւում եմ դարեւ դար:

Իմ աստուածային ծնունդն ու գործը ով իմանում է,
նա թողնելով մարմինը՝ նոր ծնունդի չի դիմանում. ինձ է
գալիս, ո՞վ Աքշունա:

Ազատ ցանկութիւնից, երկիւղից և կրքից, բարեպաշտ ու
հաւատացած ինձ, շատերը գիտութեան ապաշխարութեամբ
մաքրուած, միանում են իմ էութեան:

Որովհետեւ որոնք խոնարհում են իմ առաջ, նրանց յար-
գում եմ ես: Իմ ճանապարհին հետևում են բոլոր մարդիկ:

Ովքեր ցանկանում են գործերի վարձատրութեան, զո-
հում են աստուածներին. և շուտով այս մահկանացու աշ-
խարհի մէջ ստանում են իրենց վարձը:

Ձորս դասակարգերն ինձանից ստեղծուեցան և իրենց
յատկութիւններն ու պաշտօններն ստացան. իմացի՛ր թէ նոքա
իմ գործն են, ես որ անգործ եմ և անայլալ:

Ինձ չեն ապականում գործերը, որովհետեւ ոչ մի պտուղ
չունին ինձ համար. ով ինձ այսպէս է ընդունում, գործերով
չէ կաշկանդում:

Գիտենալով թէ իմաստուններն էլ կատարել են իրենց
գործը ազատութեան ցանկութեամբ, կատարի՛ր դու էլ այն
գործը, որ իմաստունները ժամանակին կատարել են:

«Ի՞նչ է գործը. ի՞նչ է դադարը» ասում ես: Բանա-
ստեղծներն անգամ այս բանում դժուարացել են: Գործը ես
քեզ կուսուցանեմ, և երբ դու կիմանաս՝ կազատուիս չարիքից:

Պէտք է գիտենալ գործը, պէտք է գիտենալ դադարը, պէտք է գիտենալ անգործութիւնը. դժուարը մըռնելի է գործի ընթացքը:

Ով գործի մէջ անգործութիւն է տեսնում, և ով անգործութեան մէջ գործ է տեսնում, նա իմաստուն է մարդկանց մէջ. նա եօղայի մէջ է, գործի՝ թէ չգործի:

Եթէ իւր բոլոր ձեռնարկութիւնները ցանկութեան ներշնչումներից զերծ են, իբր թէ գիտութեան կրակով այրած լինէր գործը, նրան իմաստուն են կոչում գիտունները:

Ով թողել է գործի վարձատրութեան ցանկութիւնը, և մշտագոհ է ու աննախանձ, եթէ գործով զբաղուած էլ լինի, ոչինչ չի գործում նա:

Անյոյս, անձնիշխան, նպաստամերժ, մարմնով միայն գործ գործելով, նա չի մտնիլ մեղքի մէջ:

Ամէն պատահածից գոհունակ, սիրուց և ատելութիւնից բարձր, անցանկասէր, անփոյթ յաջողութեան և անյաջողութեան մէջ, գործելիս անգամ կապուած չէ գործին:

Ցանկութիւնները վանած, ազատ, գիտութեան անճատութիւնը և զոհաբերութեամբ ընթացող մարդու համար գործն ամբողջովին հալում է:

Աստուած է նուիրարեցութիւնը. Աստուած է օծութեան իւզը. Աստուած է կրակը. Աստուած է զոհը. Աստուծուն կը գնայ նա, որ Աստուծոյ վերայ է մտածում գործի մէջ:

Եօղիներից ոմանք մասնակցում են Աստուածների զոհին. ուրիշներ Բրահմանական կրակի մէջ զոհաբերում են հենց զոհը:

Ոմանք ողջախոհութեան կրակի մէջ լսողական և այլ զգայարաններն են զոհաբերում, ուրիշներ զգայութեանց կրակի մէջ ձայնը և ուրիշ զգայական առարկաներ են զոհաբերում:

Ոմանք կենսական և զգայական բոլոր գործօնները զոհաբերում են ողջախոհութեան եօղայի կրակի մէջ, որ վառում է գիտութիւնը:

Ոմանք զոհաբերում են հարստութիւն, բարեպաշտութիւն, ջերմեւանդութիւն, ընթերցում, գիտութիւն, ժուժկալութիւն, ճգնակեցութիւն:

Ոմանք արտաշնչութեան մէջ զոհաբերում են ներշնչութիւնը, և ներշնչութեան մէջ արտաշնչութիւնը, և ներշնչութեան ու արտաշնչութեան ճանապարհը փակելով, բռնում են շնչառութիւնը ¹⁾:

1) Շնչառութիւնը ըստ կարելւոյն ուշացնելով առժը նեղիւս փրկանքի զգացումն զգործ:

Ոմանք անսուղութեամբ կեանքի պիտոյքները զոհաբերում են կեանքի պիտոյքներին մէջ: Սոքա բոլոր զոհի գիտուններ են և զոհաբերութեամբ ջնջում են մեղքերը:

Ովքեր ուտում են անմահութեան կերակուր զոհի մնացորդները՝ գնում են Յաւիտենական Բրահմայի մօտ. բայց ով չի զոհաբերում՝ նա այս աշխարհումն էլ տեղ չունի, ո՛ւր մնաց միւսում:

Այս զանազան զոհերը հաստատուած են Բրահմայի բերանից. գիացիւր որ նրանք բոլորը գործի ծնունդ են. և այս գիտենալով դու կը փրկուիս:

Լաւագոյն է գիտութեան զոհաբերութիւնը հարստութեան զոհաբերութիւնից. բոլոր գործերի կատարելութիւնը գիտութեան մէջ է բովանդակուում:

Գիտցի՛ր որ սա ստացւում է պատուելով, հարցափորձելով ծառայելով. գիտունները՝ որ տեսնում են ճշմարտութիւնը, քեզ գիտութիւն պիտի սովորեցնեն:

Գիտութեամբ այլ ևս տկարութիւն չպիտի զգան. նրանով դու պիտի տեսնես բոլոր արարածներին հոգու մէջ և յետոյ իմ մէջ:

Եթէ դու բոլոր մեղաւորներից աւելի մեղաւոր լինիս, գիտութեան նաւով բոլոր մեղքերը պիտի անցնիս:

Ինչպէս լաւուած կրակը փայտը մոխիր է դարձնում, այսպէս էլ գիտութեան կրակը բոլոր գործերը աճիւն է դարձնում:

Որովհետեւ գիտութեան նման օրհնեալ ջուր չկայ: Ով իրան Եօգայով կատարելագործում է, ժամանակին կը գտնի գիտութիւնը իր հոգու մէջ:

Հաւատացեալը ստանում է գիտութիւն, երբ անձնատուր է նրան և տէր իր զգայարաններին. գիտութիւն ստանալով՝ շուտով կը հասնի երանութեան:

Բայց տգէտն ու անհաւատը երկբայութեամբ կորչում են, որովհետեւ ո՛չ այս աշխարհը, ո՛չ հանդերձեալը, ո՛չ երջանկութիւնը երկբայողի համար չեն:

Ով Եօգայով անջանտուած է գործերից, ով գիտութեամբ երկբայութիւնը փարատել է, նա անկախ է և գործով չէ կապուած:

Ուրեմն տգիտութիւնից ծնած և սրտում բնակող այս երկբայութիւնը կտրի՛ր գիտութեան սրով. դէպի Եօգան գնա՝ վեր կաց:

Այստեղ վերջանում է Բհագավադգի՛թայի չորրորդ գլուխը՝ որի անունն է գիտութեան Եօգա:

Ե.

ԱՐՋՈՒՆԱՆ ԽՍՈՒՅԳ.

Մի կողմից դու գովում ես գործերից հրաժարումը, մի կրիշնա, միւս կողմից Եօգան. ո՞րն է լաւագոյնը այս երկուսից. առա՛ ինձ պարզորոշ:

ԿՐԻՇՆԱՆ ԽՍՈՒՅԳ.

Հրաժարումը և գործերի Եօգան երջանկութիւն են տալիս երկուսն էլ. բայց գործերի հրաժարումից աւելի լաւ է գործերի Եօգան:

Յարատե է հրաժարման մէջ նա, որ ոչ ատում է, ոչ ցանկանում. ով ազատ է այս երկուսից՝ հեշտութեամբ կապատուի կապանքից:

Սանքիան ու Եօգան բաժանում են մանուկները, բայց ոչ իմաստունները. ով նուիրւում է մէկին, գտնում է միւսի պտուղը:

Այն կայանը, ուր Սանքիայով հասնում են, կարելի է նաև Եօգայով հասնել. և ով Սանքիան ու Եօգան նոյն է տեսնում, լաւ է տեսնում:

Բայց հրաժարմամբ դժուար է հասնել առանց Եօգայի. իսկ Եօգային յարած մենակեացը շուտով Բրահմային կը հասնի:

Յարած Եօգային, հոգին մաքրած, նուաճած անձն ու զգայարանները, ապրելով համայն էակների կեանքով, գործելիս նա չի պղծուիլ:

«Նա չեմ որ գործում եմ». այսպէս պիտի մտածէ ճշմարտաճանաչ Եօգին, նայելիս, լսելիս, շօշափելիս, հոտոտելիս, ուտելիս, գնալիս, քնելիս, շնչելիս,

Խօսելիս, տալիս, առնելիս, աչքը բանալիս ու լիակելիս: «Զգայարանները զգայական առարկաների համար են շինուած». այսպէս պիտի ասի նա:

Ով ցանկութիւնները թողնելով գործում է Աստուծոյ համար, նա չի պղծւում մեղքով. ինչպէս lotus ի¹⁾ տերեւը ջրով:

Մարմնով, մտքով, բանականութեամբ ու զգայարաններով՝ Եօգիները գործում են գործը, ցանկութիւնները թողած՝ հոգու սրբագործութեան համար:

Եօգայով՝ գործերի պտուղը թողած, հասնում են գերագոյն երանութեան. առանց Եօգայի ով գործերի պտղին է սպասում՝ կաշկանդւում է ցանկութեան զօրութեամբ:

Ով ընդ որ գործերից մտքով հրաժարւում է՝ նա անգործ ու հզօր բնակում է ինն գոնով քաղաքի²⁾ մէջ, առանց գոր-

1) Lotus հնդկաց սիրելի ծաղիկն է:

2) Մարմինն որ ունի ինն ծակ:

ծելու և առանց գործել տալու:

Թէ գործունէութիւնը, թէ գործը աշխարհի տիրոջ ստեղծածը չեն, ոչ էլ գործի պտուղը վայելելու ցանկութիւնը. անհատականութիւնն է գոյացրել նրանց:

Տէրը չի վերցնում մէկի մեղքը և ոչ բարի գործը. տգիտութեամբ ծածկուած է գիտութիւնը և այսպէս թափառում են էակները:

Բայց նրանք, որոնց մէջ հոգին գիտութեամբ տգիտութիւնը ջնջել է, նրանց մէջ Արեգակի պէս լուսաւորում է գիտութիւնը Գերագոյն էակին:

Նրան մտածելով, Նքան էակցելով, Նրա մէջ բնակելով ու Նրան նուիրուելով՝ գնում են անդառնալի՝ գիտութեամբ մեղքերից ազատուած:

Գիտուն ու համեստ Բրահմանի, Եզան, Փղի, Նոյն իսկ շան, Նոյն իսկ շան միս ուտողի մէջ իմաստունները տեսնում են Նոյնին ¹⁾:

Աշխարհի մէջ նրանք են յաղթել բնութեան, որոնց մէջ միտքը հաստատ մնում է Նոյնութեան մէջ. որովհետև անմեղանշական է Նոյնն Աստուած, ուստի Աստուծոյ մէջ մնում են հաստատ:

Նա չի ուրախանում հաճելի դէպքով, նա չի տխրում անհաճոյ դէպքով. հաստատամիտ, անդրդուելի, Աստուածախորհ, Աստուծոյ մէջ հաստատուած,

Արտաքին շփումներից ազատ, նա գտնում է իր մէջ երջանկութիւնը. ով Աստուծոյն է միացել Եօգայոյ՝ անկորուստ երանութիւնն է վայելում:

Որովհետև շփումներից ծնած հաճոյքները ցաւ են առաջացնում և սկիզբ ու վերջ ունին, ով Կունտի՛ որդի. նոցա մէջ չի հրճւում իմաստունը:

Ով դիմադրում է այդ աշխարհում, մարմնից դուրս դալուց առաջ, ցանկութեան և կրքի հարուածներին, նա Եօգի է, նա երջանիկ է:

Ով իրա մէջ գտնում է իր երջանկութիւնը, իր ուրախութիւնը և իր լոյսը, նա Եօգի է, որ գնում է Բրահմայի Նիրվանային, Բրահմայի էութեան:

Այսպէս խառնւում են Բրահմայի Նիրվանայի մէջ իմաստունները՝ որոնց մեղքերը քաւուած են, միտքն անբաժան, ինքնիշխան և համայն էակների լաւութեամբ օւրախ:

Սիրուց և ատելութիւնից ազատուած, անձը և միտքը նուաճած, ինքնաճանաչ մարդը մօտ է Բրահմայի Նիրվանային:

Երբ շփումից առաջացած զգայութիւնները վաճել է

1) Այսինքն Աստուած Համառոտութեան գաղափարով.

մարդ, աչքը ուղղել է դէպի առաջ, կանոնաւորել է շնչառութիւնը և կրծքի ելևէջը,

Ձսպել է զգայարանները, միտքը, բանականութիւնը, ազատել է իրան սրանցից, վանել է իղձը, երկիւղը և կիրքը, նա հասնում է ազատութեան:

Եւ իմանում է թէ ե՞ս եմ ընդունում զոհը, ապաշխարութիւնը, ե՞ս եմ Տիեզերքի տէրը, բոլոր արարածների բարեկամը, այն ժամանակ նա ստանում է երջանկութիւնը:

Այսօր վերջանում է բնագալադգի՛թա՛յի հինգերորդ գլուխը՝ որի ամուսն է զործերից հրաժարման նօգաւ:

2.

Կրիեան խօսեց.

Նա՛ որ առանց ակնկալելու գործերի վարձատրութեանը՝ կատարում է որոշուած գործը, նա Անձնուրաց է, նա Եօգի է. բայց ոչ նա՛ որ մոռանում է Սրբազան կրակը և սուրբ գործը: Ինչ որ Անձնուրացութիւն են կոչում, գիտցիր, ո՛վ Պա՛նդուի որդի, թէ Եօգան է, որովհետեւ առանց Անձնուրացութեան Եօգի չի լինիլ ոչ ոք:

Եօգային ձգտող մենակեացի համար գործը օգնական է. և երբ նա հասնում է Եօգային, հանգիստը նրա օգնականն է: Որովհետեւ նա ոչ զգայարաններին և ոչ գործերին է յարում, և բոլորովին անձնազոհ է, ուրեմն հասել է իսկապէս Եօգային:

Թող ինքն իրան բարձրացնի և ոչ թէ ինքն իրան ցածացնի. որովհետեւ միտքը մարդու թէ բարեկամն է և թէ թշնամին:

Բարեկամ է միտքը այն անձի համար, որ ինքը իր անձին յաղթել է. բայց իբրեւ թշնամի ոչ-մտաւոր բաների, միտքը կարող է նաև դառնալ թշնամի:

Անձնիշխան և անդորր մարդու հոգին ընակում է ամփոփուած ցրտի և տաքի, հաճոյքի և ցաւի, պատուի և նախատանքի մէջտեղ:

Նա՛ որի միտքը հաճոյք է գտնում գիտութեան և ուսման մէջ, որի հոգին բարձր է, որ նուաճել է զգայարանները, որի համար հաւասար են գայլախաղը, հողի կտորը և ոսկին, նա Եօգի է, որովհետեւ հոգեպէս միացած է:

Ով որ բարեկամներին, մտերիմներին, թշնամիներին, անտարբերներին, օտարներին, ատելիներին, ազգականներին,

բարիներին և մեղաւորներին նոյն աչքով է նայում, նրան յարգում են:

Եօգին թող գործադրէ ուրեմն միշտ իր ջերմեռանդութիւնը, մենակ մեկուսացած, առանձնակի, անձնիշխան և անյոյս:

Մաքուր մի տեղում թող պատրաստի իրա համար մի հաստատուն նստարան, ոչ շատ բարձր, ոչ շատ ցածր, խոտից, կտաւից և մորթից:

Այնտեղ՝ դէպի միութիւնն յառած միտքը, զսպած զգայարանները և գործունէութիւնը, նստած նստարանի վրայ՝ թող միանայ Եօգային իր հոգու սրբագործութեան համար:

Ամբողջ մարմինը, գլուխը, վիզը պահած հաւասարակը՝ ութեան մէջ, անշարժ, հայեացքն ուղղած իր առաջ, առանց ուրիշ կողմ շարժելու:

Հոգին երանեալ, երկիւղից ազատ, նորընծայի պէս ուխտապահ, իշխան իր մտքին, թող նստի Եօգին յանուն իմ:

Այսպէս միշտ հոգին միացրած, միտքը նուաճած՝ Եօգին կը գնայ երանութեան, Նիրվանայի մէջ հալուելու, իմ մէջ ընակուելու:

Եօգան նրանը չէ, ով շատ է ուտում կամ ոչինչ չէ ուտում, ով շատ է քնում կամ միշտ արթուն է:

Ձարիքները ջնջող Եօգան նրանն է՝ ով չափաւոր ուտում է և քաղցում, չափաւոր գործում ու հանգստանում, չափաւոր քնում և արթուն մնում:

Երբ իր լիովին նուաճած միտքը իր վրայ է հաստատում, և ազատ է ամեն ցանկութիւններից, այն ժամանակ նրան կոչում են Եօգի:

Եօգին քամուց ազատ մի ճրագ է, որ չի տատանւում, երբ նուաճած իր միտքը՝ անձնատուր է լինում Եօգային:

Երբ Եօգայով կապուած միտքը վայելում է անդորրութիւնը, երբ հոգին իրա վրայ նայելով՝ իր մէջ հրճում է:

Երբ ճաշակում է այն անհուն ուրախութիւնը որ, 'գիտութիւնն է տալիս և զգայութիւններից աւելի բարձր է, երբ առանց տատանուելու յարում է գերագոյն էութեան:

Երբ ստանալով նրան՝ զգում է թէ ոչ մի ուրիշ ստացում հաւասար չէ նրան, և երբ նրան միանալով սաստիկ ցանով էլ չի բաժանւում նրանից:

Թող իմանայ թէ ցաւի հետ յարաբերութեանց այս խզումը Եօգա է կոչւում: Այս Եօգան պիտի կատարուի հաստատակամ ու մտասոյզ:

Երևակայութիւնից առաջացած ցանկութիւնները թողնե-

լով բոլորովին, մարդով նուաճելով ամէն կողմից եկած զգայութեանց խռնութիւնը:

Տակաւ առ տակաւ թող հասնի անդորրութեան՝ յարատե հաստատուն բանականութեամբ. և իր մէջ ամփոփուած միտքը ուրիշ բանի մասին չմտածէ:

Եւ ամէն անգամ, որ իր անհաստատ և դեղևոտ միտքը ուրիշ տեղեր թափառի, թող սանձահարի նրան և հնազանդեցնի:

Գերազոյն երջանկութիւնը թափանցում է Եօգիի մէջ, երանեալ մարդով, կրքերից անդորր, Աստուած դառած, անարատ:

Միշտ Եօգա կատարելով Եօգին մարբուած արաններից, Աստուծոյ հետ հաղորդակցութեամբ անհուն երանութիւնն է վայելում:

Համայն էակների մէջ ընակուած հոգուն և հոգու մէջ համայն էակներին է տեսնում, երբ իր հոգին Եօգայով միացած է և ամէն տեղ նոյնին է տեսնում:

Ով ինձ է տեսնում ամէն տեղ, և ամեն բան իմ մէջ է տեսնում, նա ինձ չի կորցնում, նա ինձ համար չի կորչում:

Ով պաշտում է ինձ՝ համայն էակների մէջ ընակուածիս և միութեան մէջ հաստատուն է, ամէն զրութեան մէջ էլ, նա Եօգիով ինձ է միացած:

Ով իր անձի նմանութեամբ ամէն տեղ նոյնին է տեսնում, երջանիկ թէ դժբախտ, նա ընտիր Եօգի է:

Արջունան խօսեց.

Ո՛վ Մադհուի սպանողը, ես չեմ կարծում՝ որ մտքի անհաստատութիւնը մի հաստատուն կայան թողնի այս Եօգային, որ դու գնում ես համանմանութեան մէջ:

Որովհետեւ դեղևոտ է միտքը, ո՛վ Կրիշնա, յարափոփոխ, ուժեղ ու հզօր. ինձ թուում է այնքան անընկճելի՝ ինչքան քամին:

Կրիշնան խօսեց.

Անտարակոյս, ո՛վ դիւցազն, միտքը անգուռա, յարափոփոխ է. բայց ճգնութեամբ և կրքերի արտաքսումով զսպւում է:

Ով չի նուաճել իր անձը՝ նրան դժուար է հասնել Եօգային. այսպէս եմ մտածում ես. ոակայն ով սանձել է իրեն, կարող է հասնել նրան:

Արջունան խօսեց.

Անանձնիշխան, բոց հաւատացեալ, միտքը Եօգայից հե-

ռացած և Եօգայի կատարելութեան շնորհիւ անձը որ ճանապարհն է գնում, ո՞վ Կրիշնա:

Արդեօք երկու կողմից վատարուելով պատահուած ամպի պէս անհետանում է, անկայուն, հեռու Բրահմայի ճանապարհին:

Այս իմ տարակոյսը, ո՞վ Կրիշնա, հաճի՛ր փարատել լիովին. բացի քեզանից չկայ մէկը, որ կարենար այս տարակոյսս փարատել:

Կրիշնան խօսեց.

Ո՞վ Պրիթւիյի որդի, ոչ այս աշխարհում, ոչ հանդերձեւում նա չի կարող անհետանալ. որովհետեւ ոչ մի բարեգործ մարդ չի գնում բնաւ թշուառ ճանապարհը:

Հասնելով քաւեալների աշխարհը, բնակելով այնտեղ երկար տարիներ, նորից ծնւում է քաւեալների և երջանիկների մի ընտանիքում:

Կամ մինչև իսկ Եօգա կատարող իմաստունների ընտանիքում. շատ դժուար է աշխարհում այսպիսի ծնունդ ձեռք բերել:

Այստեղ վերսկսում է իր նախկին բարեպաշտական ճրջ-նութիւնները և աւելի է ձգտում դէպի կատարելագործութիւն:

Որովհետեւ իր նախկին կրթութիւնը քաշում է նրան աւկամայ, մինչև իսկ եթէ Եօգայի հասնելու ցանկութեան մէջ շեղուի բրահմանական վարդապետութիւնից:

Ճիշդով նուաճած իր միտքը, Եօգին՝ իր ուպակաճութիւններից սրբուած, մէկից աւելի ծնունդներով կատարելագործուած գնում է վերջապէս գերագոյն ճանապարհը:

Եօգին այն ժամանակ գերագոյն է ճգնաւորներից. դերագոյն է իմաստուններից, գերագոյն է գործի մարդկանցից: Ուրեմն Եօգի՛ եղիր, ո՞վ Արջունա:

Բոլոր Եօգիներն մէջ, ով ինձ է գալիս իր որտում, հաւատքով պաշտում է ինձ, նա ինձ համար գերագոյն Եօգին է:

Այստեղ վերջանում է Բհագավադգի՛տայի վեցերորդ գլուխը, որի տնունն է ինքնահուանման Եօգա:

Է.

Կրիցնան խօսեց.

Իմ վերայ յառելով միտքդ, Եօգա կատարելով, ինձ աւ-
շադիր լինելով՝ լիովին ու ազնւորեալ ի՞նչպէս պիտի ճանաչես
ինձ. ա՛յդ լսիր այժմ:

Այս գիտութիւնն իր ստորաբաժանումներով պիտի սո-
վորեցնեմ քեզ, որը սովորելուց յետոյ՝ աշխարհում այլ ևս
ոչինչ չի մնում սովորելու:

Հազարաւոր մարդկանց մէջ ոմա՛նք միայն ձգտում են կա-
տարեւագործութեան. և այդ կատարեւագործեալ իմաստուն-
ների մէջ հազիւ մէկը ինձ ճանաչում է էութեամբս:

Հողը, ջուրը, կրակը, քամին, օդը, միտքը, բանականու-
թիւնը և Ես. ահա իմ էութիւնը բաժանուած ութ տարրերի:

Սա ստորինն է: Այժմ ճանաչիր իմ միւս գերագոյն էութ-
իւնը, որ կեանքի սկզբունքն է և որով աշխարհը մնում է:

Իւր ծոցումն են բնակւում համայն էակները. Ես եմ
Տիեզերքի արարչութեան գոյութիւնը և լուծումը:

Ինձանից բարձր չկայ ոչ ոք. ինձանից է կախուած ամբողջ
այս տիեզերքը՝ ինչպէս մարդարտի շարքերը թելի վրայ:

Քաղցրութիւնն եմ ես ջրերի մէջ, լոյսն իմ Լուսնի և
Արեգակի մէջ, օրհնելոյն եմ բոլոր Վեդաների մէջ, ձայնը օդի
մէջ, առնականութիւնը մարդու մէջ:

Մաքուր բոյրը հողի մէջ, շողքն եմ ես կրակի մէջ, կեանքը
համայն էակների մէջ, ճգնութիւնն եմ ճգնաւորների մէջ:

Գիտցի՛ր, ով Պրիթւյի որդի, թէ ես համայն էակների
սերմն եմ անսպառելի, իմաստունների իմաստութիւնն եմ,
արիների արիութիւնն եմ:

Հօրների զօրութիւնն եմ ես՝ կրքից ու ցանկութիւններից
ազատ, կենդանի էակների մէջ օրինական ունեւն եմ:

Ճմարտութիւնը, կիրքը և խաւարը գիտցի՛ր թէ ինձանից
են. բայց ես նոցա մէջ չեմ, այլ նոքա իմ մէջ:

Այս երեք որակութեանց եղանակաւորութիւններով ամ-
բողջ աշխարհը պղտորուած՝ չի ճանաչում ինձ իբր նոցա գե-
րագոյնը և անջնջելի:

Իրերի եղանակաւորութեանց այս դիւթութիւնը դժուա-
րանցանելի է. ովքեր ինձ հետեւում են, ազատւում են նրանից:

Բայց չարագործները և պղտոր հոգիները չեն կարող ինձ
հետեւել, ոչ էլ ստորին մարդիկ՝ որոնք խաբւում են հեշտու-
թիւնից և սատանայի ընդթիւնից են:

Ձորս դաս բարեգործ մարդիկ պաշտում են ինձ, ո՛վ Արջունա.—տառապեալը, ուսումնասէրը, ընչասէրը և իմաստունը:

Սոցա մէջ իմաստունն է, որ միշտ Եօգայի մէջ, յարած միակ պաշտամունքի, գերազանցում է բոլորին: Իմաստունի համար ամէնից աւելի սիրելին ես եմ, և նա իմ սիրելին է:

Բարի են բոլոր այս ծառաները. բայց իմաստունը հոգով աստուած է, որովհետև մտաւոր Եօգայի մէջ նա հետևում է ինձ իբրև վերջին ճանապարհ:

Բազմաթիւ ծնունդներից յետոյ իմաստունը ինձ է գալիս: Ով ասում է «Վասուդէվան տիեզերքն է», նա չի ըմբռնում Գերագոյն Հոգուն:

Նոքա՝ որոնց միտքը խաբուած է ցանկութիւններից, դիմում են այլ աստուածութիւնների. նոքա հետևում են իրենց պաշտամունքին, կապուած իրենց ընտելութեամբ:

Ով էլ լինի այն աստուածային անձը՝ որին մի մարդ ցանկանում է նուիրել իր հաւատքը, ես այդ հաւատքը անդրդուեցի եմ դարձնում նրա մէջ:

Եւ նա հաւատքով միացած՝ նրան ծառայել է աշխատում, և ստանում է ցանկալի բարիքները՝ որ ես եմ բաշխում:

Բայց սահմանափակ է այս սակաւամիտ մարդոց վարձատրութիւնը, ովքեր աստուածներին են զոհում՝ աստուածներին են գնում. բայց ովքեր ինձ են պաշտում, ինձ են գալիս:

Ինձ՝ Անտեսանելուս տեսանելի են կարծում անգիտաբար տգէտները. իմ գերագոյն էութիւնը չեն ճանաչում նոքա՝ անայլայլ ու վեհագոյն:

Ես չեմ երևում բոլորին և Եօգայի դիւթութեամբ միայն բացւում եմ. ապականեալ աշխարհը չի ճանաչում ինձ՝ որ անձին եմ ու անեղծ:

Ճանաչում եմ ես անցեալ, ներկայ և ապագայ էակներին, ո՛վ Արջունա. բայց ինձ չի ճանաչում ոչ ոք:

Ցանկութեամբ կամ զգուանքով պղտորուած՝ քոլոր էակներն այս աշխարհում դէպի մեղքն են դնում:

Բայց նոքա որ ջնջել են իրենց մեղքերը գործերի մաքրութեամբ, մեղքի ապականութիւնից ազատուած պաշտում են ինձ յարատևութեամբ:

Ովքեր ծերութիւնից և մահուանից ազատութիւնը իմ մէջ փնտռելով ինձ են ապաստանում, ոքո՞ւ ճանաչում են Բրահմային, Գերագոյն Հոգուն և գործը ամբողջապէս:

Եւ ովքեր ինձ ճանաչում են իբր Առաջին Կենդանի էակ,

Սկզբնական Աստուածութիւն և Առաջին զոհ, նոքա վերջին օրը կը տեսնեն ինձ մտքով միացած:

Այս օեղ վերջանում է Բնագավադգի՛ղա՛յի եօթներորդ զուխը, որի անունն է ծանօթութեան եօգա:

Ը.

Արջունան խօսեց.

Ո՞վ է Աստուած, ո՞վ է Գերագոյն հոգին, ի՞նչ է. գործը. Առաջին կենդանի էակ և Սկզբնական Աստուածութիւն ո՞ւմ ես կոչում:

Ի՞նչպէս Առաջին զոհ կարող է լինել նա, որ այստեղ մարմնի մէջ է բնակւում: Վերջին օրն ի՞նչպէս կարող ես գրա-նուել անձնիշխան մարդոց մաքում:

Կրիսնան խօսեց.

Աստուած գերագոյն անբաժանելին է. ներքին էութիւնը Գերագոյն Հոգի է կոչում. գործը էակաների նիւթա-կան գոյութիւնը արտադրող ծնունդն է:

Առաջին կենդանի էակը բաժանելի էութիւնն է. Սկզբն-նախն առտուածութիւնը առնական ոյժն է. Առաջին զոհը էն եւ մարմնի մէջ մարմնացեալ:

Ով վերջին օրը ինձ յիշեալ և մարմինը թողնելով դուրս է գալիս, նա իմ էութեան մէջ է մտնում. չկայ այստեղ տարակոյս:

Բայց ով մտածում է մի ուրիշ էութեան մասին, երբ թողնում է իր մարմինը՝ նրան է գնում, ուղղահետև նրա էութեամբ է էացած:

Աւրեմն ամէն ժամանակ ինձ յիշիւ և կռուիւ. ինձ յառաժ միտք ու բանականութիւնը՝ գու ինձ կը գառ պնտարակոյս:

Մշտանկէս Եօգայով ինձ կապուած և ուրիշ տեղ չթափառող մտքով մարդը գնում է դէպի գերագոյն երկնային Ոգին, որի վրայ ընակում էր:

Այս վաղեմի բանաստեղծը, կարգադրիչ աշխարհի, աւելի նուրբ քան հիւլէն, ամենախնամ, ձևով անըմբռնելի, որ խաւարի մէջ արեգակնամասն փայլում է:

Մահուան օրը հաստատուն մտքով, սիրով և Եօգայով սրան միացած, յօնքերի մէջտեղ կենդանական շունչը միացրած, Գերագոյն երդնային Ոգուն է դիմում:

Այն ճանապարհը, որը անբաժանելի են կոչում վէդայագէտները¹⁾, ուր գնում են անձնիշխան ու կրքից ազատ մարդիկ, որին ցանկանում են Բրահմայի նորընծաները, ահա այդ ճանապարհը պիտի ցոյց տամ քեզ համառօտակի:

Չգայարանների բոլոր դռները փակած, միտքը սրտում կենդրոնացած և կենսական շունչը գլխում, հաստատուն և յարատև եօգայի մէջ:

«Ո՛ր» սրբազան ըառը մի և անբաժանելի Բրահմային ուղղելով, իմ վրայ մտածելով, ով մեկնում է թողնելով մարմինը, նա գնում է գերագոյն ճանապարհը:

Ով առանց ուրիշ բանի վրայ մտածելու՝ միշտ ինձ է յիշում անդադար, ես մատչելի եմ նրան. նա յաւիտենապէս միացած եօգի է:

Ինձ հասնելով՝ նորից այս կորնչական չարալից ծնունդը չեն ստանում այդ մեծ հոգիները՝ որոնք գտել են գերագոյն կատարելութիւնը:

Բրահմայի մօտ են դառնում նորից աշխարհները, ով Արջունա. բայց ով ինձ է հասնում, նա նորից չի ծնւում:

Ովքեր գիտեն՝ թէ Բրահմայի մի օրը հազար դարաշրջան է պարունակում, և մի գիշերը նոյնպէս հազար դարաշրջան, նոքա ճանաչում են օրն ու գիշերը:

Անտեսանելիից են ծագում բոլոր տեսանելիները օրուայ սկզբին, և երբ գիշերը հասնում է, նոքա լուծւում են նոյն անտեսանելիում մէջ:

Այսպէս էակների ամբողջութիւնը ծնւում է, նորից ծնւում է. հալւում է, գիշերը հասնելիս ցրւում է, և վերածնւում է առաւօտեան:

Բայց այս տեսանելի էակից դուրս, կայ և ուրիշը՝ անտեսանելի և յաւիտենական. ամբողջ էակները կորչում են, բայց նա չի կորչում:

Նա կոչւում է Անտեսանելի և Անբաժանելի. նա գերագոյն ճանապարհն է. նրան հասնողը էլ յետ չի դառնալ, այնտեղ է իմ գերագոյն ընակարանը:

Այս Առնական ուժին հասնում են միմիայն նրան պաշտելով. նրա մէջ հանգչում են էակները. նրանով է այս ամբողջ Տիեզերքը:

Ո՞ր ժամանակ են գնում եօգիները վերագառնալի կամ անդառնալի կերպով. ահա այդ ժամանակը պիտի սովորեցնեմ քեզ, ով Բհարատայի որդին:

1) Հնդկաց Ս. Գիրքը՝ վէդան սովորած մարդ:

Արակը, լոյսը, օրը, նոր լուսինը, այն վեց ամիսները՝ երբ Արևը հիւսիսումն է. ահա ժամանակը՝ երբ գնում են Բրահմայի մօտ բրահմայաճանաչ մարդիկ:

Ծուխը, գիշերը, վերջին լուսինը, հարաւի վեց ամիսները. ահա երբ գնում է Եօգին լուսնի պարունակի մէջ և յետոյ վերադառնում:

Ահա երկու յաւիտենական ճանապարհները, պայծառ կամ խաւար, հաւատալիք այս աշխարհի. մին գնում են անդառնալի, միւսը գնում են վերադառնալի:

Այս երկուսին ճանաչելով Եօգին չի վրդովւում. ուստի ամէն ժամանակ Եօգայով միացիր, ո՛վ Արջունա:

Վեդայի ընթերցման, զոհի, ճգնութեան և ողորմութեան համար խոստացուած վարձատրութիւնները, այս բոլորը գերազանցում է Եօգին գիտութեամբ և գերագոյն հանդիսան է հասնում:

Այստեղ վերջանում է Բհագավադգիտաշի ութերորդ գլուխը, որի անունն է Անբաժանելի եւ Գերագոյն Բրահմայի Եօգա:

Թ.

Կրիշնան խօսեց.

Այժմ ես քեզ կը բացատրեմ իր ամբողջութեամբ և իր մասերով այն խորհրդաւոր գիտութիւնը, որը սովորելով դու կազատուես չարիքից:

Դա գիտութեան թագաւորն է. դա գաղտնիքների թագաւորն է. դա գերագոյն սրբագործութիւնն է, ներհայեցողութեամբ ըմբռնելի, օրինական, գործադրութիւնը հաճոյական, անսպառ:

Նորա օրինականութեանը չհաւատացող մարդիկ, ինձ չեն հասնում և ենթարկւում են մահուան յեղափոխութեանց:

Ե՛ս կազմեցի այս ամբողջ տիեզերքը՝ անտեսանելի ձևովս. իմ մէջ են պարունակւում բոլոր էակները. իսկ ես նոցա մէջ չեմ պարունակւում:

Բայց նաեւ էակները իմ մէջ չեն պարունակւում. տե՛ս Եօգայի գաղտնիքը. իմ հոգին էակների տաճիչն է, բայց առանց էակների մէջ պարունակուելու՝ էակների էութիւնն է:

Ինչպէս օդի մէջ պարունակւում է անդադար ամէն կողմից փչող մի մեծ քամի, այնպէս էլ բոլոր էակները պարունակւում են իմ մէջ. ըմբռնի՛ր այս:

Բոլոր էակները մտնում են իմ արարչականութեան մէջ
Կալպայի¹⁾ լերջը. նրանց նորից Կալպայի սկզբին արձակում
եմ ես:

Իմ արարչականութեան մէջ անշարժ, արձակում եմ
հետզհետէ էակների այս ամբողջութիւնը առանց իրենց կամ-
քին, միայն իմ արարչական ուժով:

Եւ ինձ այս գործերը չեն կաշկանդում. ես դուրս եմ
նոցանից և իրենցից կախուած չեմ:

Իմ կարգադրութեամբ արարչականութիւնը ծնում է
շարժական և անշարժ իրերը. և այս պայմանով աշխարհը
դառնում է:

Արհամարհում են ինձ անգգամները՝ երբ մարդկային
մարմին եմ զգենում, իմ գերագոյն էութիւնը չճանաչելով՝
որ բոլոր արարածների հրամայողն է:

Ձուր յոյսեր, զուր գործեր, զուր գիտութիւն, խելա-
ցնորներ. Ռաջասանների և Ասուրանների²⁾ խռովարար ուժի
տակ են:

Բայց մեծահոգի իմաստունները իմ աստուածային արար-
չականութեան հետևում են, պաշտում են միայն իմ մասին
մտածելով, և ճանաչելով, ինձ իբր էակների անայլայլ սկզբ-
բունքը:

Անգագար օրհնաբանում են ինձ, մաքառելով ու հառ-
տատուն մնալով իրենց ուխտի մէջ, պատում են ինձ, պաշ-
տելով և յաւիտենական եօգայով ծառայելով:

Ուրիշներ գիտութեան զոհը զոհաբերելով՝ ինձ ծառա-
յում են՝ միութեանս ու պարզութեանս մէջ՝ երեսոս դար-
ձրած ամենուրեք:

Ես պաշտումն եմ, ես զոհն եմ, ես մեռելոց պատա-
րագն եմ, ես փրկութեան բոյսն եմ, ես օրհներգն եմ, ես
օծումն եմ, ես կրակն եմ, ես մատաղն եմ:

Հայրն եմ ես այս աշխարհի, մայրը, ամուսինը, պապը:
Ես վարդապետութիւնն եմ, սրբագործութիւնը, սրբազան
Օ՛մը, Ռիգը, Սաման և Նաջուրը:

Ճանապարհը, պահապանը, տէրը, վկան, օթեանը, ապա-
ւէնը, բարեկամը, ծնունդը, ջնջումը, հանգիստը, գանձը,
անմահ սերմը:

Ես եմ տաքացնում, ես եմ անձրևը պահում և տեղում.
անմահութիւնն ու մահը, էութիւնն ու անէութիւնն եմ ես,
ո՛վ Արջունա:

1) Հագարաուր տարիների մի դարաշրջան.

2) Սատանաների տեսականեր:

Վեդայագրքէտները Սոման ¹⁾ ըմպելով, մեղքերից քաւուած և զոհը մատուցած՝ ինձ են համարում երկնային ճանապարհը: Նոքա հասած Ինդրա Աստուծոյ ընակարանը՝ ճաշակում են դրախտում աստուածային սնունդը:

Եւ երբ ճաշակել են այս ընդարձակ երկնային աշխարհից, արժանիքներն սպառած, մահկանացուների աշխարհն են դառնում: Եւ այսպէս երեք օրինադրքերին հետևող մարդիկ՝ երջանկութեան ցանկանալով՝ ենթարկւում են վերագործներին:

Մարդիկ՝ որ առանց ուրիշ բանի վրայ մտածելու ծառայում են ինձ և մնում են միշտ ինձ միացած, Խոգայի երանութիւնն են ստանում ինձանից:

Եւ նոքա՝ որ ուրիշ աստուածութիւնից պաշտելով զոհում են հաւատքով լցուած, նոքա ինձ էլ զոհում են՝ թէև հին օրէնքից դուրս:

Որովհետև բոլոր զոհերն էլ ես եմ հաւաքում, ես եմ ընդունում. բայց նոքա ինձ չեն ճանաչում իմ էութեամբս, կրկին ընկնում են նոքա:

Աստուածապաշտները գնում են Աստուածներին, նախնեաց պաշտողները գնում են նախնիքներին. դիւապաշտները գնում են դեերին. իսկ ինձ պաշտողները ինձ են գալիս:

Երբ մէկը ինձ մի տերև, մի ծաղիկ, մի պտուղ կամ մի հեղուկ է ընծայում իբր պաշտամունք, ես ընդունում եմ իբր սնունդ և բարեպաշտական ընծայաբերութիւն:

Ինչ անում ես, ինչ ուտում ես, ինչ զոհում ես, ինչ տալիս ես, ինչ կրում ես, ո՞վ Կունտի՛ի որդի, նրանից արժ ինձ ընծայաբերութիւն:

Բարի թէ չար պտղով՝ գործերի կապանքից դու կազատուիս, և հոգիդ անձնուրաց կերպով միացած Նոգային, ազատ, կը գաս ինձ մօտ:

Նոյնն եմ ես բոլոր էակների համար. ոչ ատելութիւն ունիմ, ոչ սէր. բայց ովքեր պաշտում են ինձ՝ նոքա իմ մէջն են և ես նոցա մէջ:

Նոյն իսկ ամէնից յանցաւորը երբ պաշտում է ինձ՝ առանց ուրիշին մատուցանելու իր պաշտամունքը, նա լաւ պիտի համարուի, որովհետև բարի ճանապարհն է բռնում:

Շաւտով նա կը լինի արդար, և յաւիտենական հանգիստը կը գնայ: Ո՞վ Կունտի՛ի որդի, խոստովանի՛ր թէ ինձ պաշտողը չի կորչի:

1) Զոհի ժամանակ բաժանուած ըմպելիքը՝ որ պատրաստւում է զանազան ծաղիկներից եւ այլն:

Որովհետեւ ինձ ապաստանողները, մինչեւ իսկ եթէ մեղքի մէջ յղացուած լինին, կանայք, վայսիաներ, նոյն իսկ սո՛ւտ-
րաները, գնում են գերագոյն ճանապարհը:

Ո՞ւր մնաց սուրբ բրահմանները և բաշեպաշո տրքայա-
կան իմաստունները: Այս կորնչական ու ցաւալից աշխար-
հում գետեղուած, պաշտի՛ր ինձ:

Ի՛նձ յատկը միտքդ, ի՛նձ պաշտիր, ի՛նձ զօհիր և ի՛նձ
պատուիր. և միայն ինձ տեսնելով ու ինձ միանալով, դու
ի՛նձ կը հասնես:

Այսեղ վերջանում է Բնագավողի՛հա՛յի իննեւորդ գլուխը,
որի անունն է գիսուրեանց քաղաւորի ու գաղսնիքների քաղաւորի
եօգա:

Ժ.

Կրիւնան խօսեց.

Լսի՛ր, ո՛վ մեծագօր, լսի՛ր իմ գերագոյն խօսքերս, որ ես
քեզ ասելու եմ քո փրկութեան համար:

Ոչ աստուածների դասը և ոչ Մեծ Իմաստունները՝ չեն
իմանում իմ ծնունդը, որովհետեւ ես եմ աստուածների և
բոլոր Մեծ Իմաստունների սկիզբը:

Ով ինձ անծին և անսկիզբ գիտէ, և աշխարհի տէրը, նա ան-
սխալ է մահկանացուների մէջ, և բոլոր մեղքերից քաւուած է:

Բանականութիւնը, գիտութիւնը, արարութիւնը, համ-
բերութիւնը, ճշմարտութիւնը, սրբակեցութիւնը, խաղաղու-
թիւնը, հաճոյքը, ցաւը, գոյացութիւնը, ջնջումը, երկիւղն ու
ապահովութիւնը,

Քաղցրութիւնը, հոգու անդորրութիւնը, ուրախութիւնը,
ճգնութիւնը, ողորմածութիւնը, փառքը, նախատինքը՝ էակ-
ների էութիւններն են, որոնք ինձնից են բաշխուած:

Եօթը Մեծ Իմաստունները, չորս Պո՛ւրբաները և Մանու-
ները իմ մէջ էացած և իմ մաքով են ծնուած, և նոցանից
աշխարհի մէջ մարդիկ:

Ով իմ այս կարողութիւնը և եօգան գիտէ էապէս, նա
անդրդուելի եօգայով կապւում է անտարաւոյս:

Ես եմ բոլորի սկիզբը, տիեզերքն ինձնից է ծագել. այս-
պէս մտածելով պաշտում են ինձ իմաստունները՝ գերագոյն
էութեան էակից:

Իմ վրայ մտածելով, իմ մասին հաւաքելով, սովորեցնե-
լով իրար, պատմելով ինձ անդադար, ուրախանում են և
հրճւում:

Նոցա որ միշտ եօգայով միացած, ընծայում են ինձ սիրոյ զոհը, տալիս եմ բանականութեան եօգան, որով նորա ինձ են հասնում:

Իմ ողորմածութեամբ և առանց իմ էութիւնից հեռանալու՝ ես նոցա միջից փարատում եմ տգիտութեան խաւարը, գիտութեան լուսաւոր ջահով:

ԱՐՋՈՒՆԱՆ Խօսեց.

Գուք էք գերագոյն բրահման, գերագոյն բնականը, գերագոյն սրբազործութիւնը, երկնային և յաւիտենական Ողին, Սկընական աստուածութիւնը, անձին, տէր:

Քեզ խոստովանում են ըոլոր իմաստունները, երկնային իմաստունն Նաճադա, Ասիտան, Գէվալան, Վիւսան. այժմ ինձ էս յայտնում քեզ:

Այս ըոլորը որ դու ինձ խօսեցիր, ընդունում եմ իբր ճշմարտութիւն. որովհետեւ ոչ աստուածները և ոչ Գանաւ վաները չգիտեն թէ ինչպէս դու տեսանելի ես դառնում:

Ինքդ միայն գիտես քեզ, ո՞վ մարդկանց վեհագոյնը, էակները՝ էակը, կենդանիները իշխան, աստուածները Առտուած, արարածների տէր:

Հաճի՛ր ինձ պատմել առանց ծածկելու այն երկնային առանձնայատկութիւնները, որոնցով դու պահում ես այս աշխարհները թափանցելով նոցա մէջ:

Ի՞նչպէս կարող եմ ճանաչել քեզ, ո՞վ եօգի, մտքով միացած քեզ. քո ո՞ր էութիւններով դու ինձ մատչելի կը լինիս:

Պատմի՛ր ինձ երկար քո եօգան և քո կարողութիւնը, ո՞վ մարդկանց յաղթական, քո խօսքերն իմ ահանջիս անյադելի ամբըրոսիա են:

ԵՐԻՇՆԱՆ Խօսեց.

Արդ Քեզ պատմեմ երկնային առանձնայատկութիւններս համառօտակի. որովհետեւ չկայ սահման իմ անհունութեան:

Ես ըոլոր կենդանի էակների մէջ գտնուող հոգին եմ. ես էակների սկիզբը, միջոցը և վերջն եմ:

Ա՛գիտիաների մէջ ես Վիշնուն եմ, Լուսաւոր մարմինների մէջ լուսապայծառ Արեգակը. Մարդաների մէջ Մարիճին եմ, Համաստեղութեանց մէջ Լուսինը:

Վէգաների մէջ Սաման եմ ես, աստուածների մէջ Վաւաւան, զգայութեանց մէջ միտքը, էակների բանականութիւնը:

Ռուգրմաների մէջ Դանկարան եմ, Եաքշաների և Ռաքշա-
տաների մէջ հարստութեանց իշխանը, Վասոունների մէջ Պա-
վական եմ, լեռնագագաթների մէջ Մերուն:

Ես առաջին քահանայապետն եմ, գիտցի՛ր, ս՛վ Պրիթանյի
որդի, ես Վրհասպատին եմ. զօրապետների մէջ Սկանդան,
լճերի մէջ Ովկիանն եմ:

Մեծ իմաստունների մէջ Բհրդուն եմ ես. բառերի մէջ
միակ անբաժանելին Ո՛ւմ, զոհաբերութեանց մէջ լուռ աղօթքն
եմ, լեռնաշղթաների մէջ Հիմա՛լայան:

Բոլոր ծառերի մէջ թզենին, Աստուածային իմաստուն-
ների մէջ Նանդան. երկնային երաժիշտների մէջ ձիտրա-
բաթան, որբերի մէջ Կապիլա ճգնաւորը:

Նժոյգների մէջ Ուճչայշրավան գիտցի՛ր ինձ՝ ծնած ամ-
բրոսիայից, Այրս՛վատան փղերի մէջ, մարդկանց մէջ իշխա-
նաւորը:

Ձէնքերի մէջ կայծակն եմ, կովերի մէջ կամադհունն եմ.
Ես ծնիչ Կանդարպան եմ, օձերի մէջ Վասուկին եմ:

Անանտան եմ ես նադաների մէջ, Վարունան եմ ջրա-
յին կենդանիների մէջ, նախահայրերի մէջ Արիամանն եմ, դա-
տաւորների մէջ Նաման:

Պրահլադան եմ Դայտիանների մէջ, ժամանակն եմ չա-
փերի մէջ. գազանների մէջ վագրը, թռչունների մէջ վայ-
նատէյան:

Մաքրիչ բաների մէջ քամին եմ. Ռաման եմ պատերազ-
միկների մէջ. ձկների մէջ մակարան եմ. գետերի մէջ Դանդէոր:

Արարչութեան մէջ սկիզբն եմ, միջոցը և վերջը, ս՛վ Ար-
ջունա. գիտութեանց մէջ Գերագոյն Հոգու գիտութիւնը,
խօսողների համար ես խօսքն եմ:

Գրերի մէջ Այրն եմ. բազադրեալ բառերի մէջ բարդու-
թիւնը. ես անսահման ժամանակն եմ. ես Արարիչն եմ ամե-
նատես:

Մահն եմ ամենակալ և կեանք ասպագայ էակների. իդա-
կան բառերի մէջ փառքը, բախտ, պերճախօսութիւն, յիշո-
ղութիւն, սրամտութիւն, հաստատակամութիւն, համբերու-
թիւն:

Ամմայի երգերի մէջ մեծ օրհներդն եմ. չափաբերու-
թեանց մէջ դայատրին, ամիսների մէջ մանդաշխրսան¹⁾ եղա-
նակների մէջ դարունը:

1) Գրեթէ համապատասխանում է Հին Հայոց Մաղաք Դուրմալիկան
մայիս ամսին:

Խարեւրանների բախտն եմ եմ ես, նշանաւորների շուքը, ես յաղթութիւնն եմ, խորհուրդն եմ, ճշմարտասէրներն ճշմարտութիւնն եմ:

Վրշնիկի որդոց մէջ Վանուզիվան եմ. Պանդաւանների մէջ ինքդ եմ. մենակեացների մէջ Վյանտան եմ, բանաստեղծների մէջ Ուշանան:

Տգնաւորների ճգնութիւնն եմ ես, կարգապահութիւնն յաղթականների, լռութիւնը գաղանիքների մէջ, գիտութիւնը իմաստունների մէջ:

Ի՛նչ բեղմնաւորութիւն կայ բոլոր էակների մէջ. այդ է՛ս եմ, Ա՛րջունա. որովհետեւ առանց ինձ գոյութիւն չէ կարող ունենալ ո՛չ մի բան, շարժական թէ անշարժ:

Վերջ չունին իմ երկնային զօրութիւնները, ո՛վ Արջունա, և ես քեզ պարզեցի մի ամենատկար մասն իմ կատարելութեանց:

Ինչ որ կայ ընտիր, երջանիկ նաեւ զօրաւոր. դա ծագել է իմ կարողութեան մի նշոյլից:

Բայց ինչո՞ւ քեզ այս բովանդակ գիտութեամբ ծանրաբեռնել, ո՛վ Արջունա. երբ ես հանգչեցրի ամէն ինչ իմ անձիս մի մասնիկի վերայ, աշխարհը կազմուեց:

Այստեղ վերջանում է Բնագով ոգգրահայի աստեղծող գլուխը, որի անունն է Գեոպոյնի Եօգան:

ԺԱ.

Արջունան խօսեց.

Գերադոյն Հոգու գիտութեան վեհադոյն գաղանիքը, որ դու ինձ բացատրեցիր իմ փրկութեան համար, փառասեց ինձանից իմ մոլորութիւնները:

Որովհետեւ ընդարձակօրէն լսեցի ես էակների ծնունդն ու վախճանը ո՛վ Եօգ ծաղիկ աչքերով Աստուած, և քո անկորնչելի մեծանձնութիւնը:

Բայց ես ցանկանում եմ տեսնել, ո՛վ վեհադոյն տէր, քո անձնաւորութիւնը, այն ձեռով որով նկարեցիր դու, ո՛վ մարդկանց գերադոյնը:

Եթէ դու մտածում ես թէ այս տեսիլքը ինձ մատչելի է, ո՛վ Եօգայի տէր, այն ժամանակ ինձ ցոյց տու՛ր քեզ, քո յաւերտենական հոգին:

ԿԵԻՇՆԱՆ ԽՈՍԵՑ.

Տէս, ո՛վ Պրիթանյի որդի, տես իմ ձեռքը՝ հարիւրապատիկ ու հազարապատիկ զանազանեալ, երկնային, բազմադոյն ու բազմապիսի:

Տես Ա՛ղիտյաները, Վասուկները, Ռուզբաները, Երկու Աշվինները, Մարուսները. բազմաթիւ անժանօթ այս հրաշալիքները տես:

Ահա իր միութեան մէջ տես այս տիեզերքը շարժական և անշարժ առարկաներով բովանդակուած իմ մարմնի մէջ և ամէն ինչ որ դու տեսնել ես ցանկանում:

Բայց որովհետեւ դու ինձ չես կարող տեսնել քո մարմնաւոր աչքերով, երկնային աչք կը տամ քեզ, և նայիր իմ մէջ գերադոյն Եօգային:

Ամնօրայան ԽՈՍԵՑ.

Այսպէս խօսելով մեծ Եօգայի տէր Հարին, ցոյց տուաւ Պրիթանյի որդուն իր փառահեղ վեհադոյն դէմքը:

Լի բազմաթիւ աչքերով ու երեսներով, բազմաթիւ ոքան-չելի երևոյթներով, բազմաթիւ աստուածային զարդարանքներով, երկնային բազմաթիւ գէնքեր բռնած:

Աստուածային դրասանքներով ու զգեստներով, երկնային ըոյրերով անուշաբուրուած, ամէն բանով հրաշալի, շողշողուն, անհուն, երեսն ամենուրեք:

Նիւթ երկնքում յանկարծ ցոլանար հազար արեգակների բոցափայլութիւնը, կարելի կը լինէր համեմատել այս մեծանձն Աստուծոյ բոցափայլութեան հետ:

Այնտեղ Պանդուի որդին տեսաւ տիեզերքն ամբողջ և միակ ու բազմապատիկ Աստուածների Աստուծոյ մարմնում:

Եւ այն ժամանակ սարսափահար, մազերը կանգնած, հսկան ծռեց իր գլուխը և ձեռքերը միացնելով՝ խօսեց Աստուծուն:

ԱՐՉՈՒՆԱՆ ԽՈՍԵՑ.

Տեսնում եմ բոլոր աստուածներին քո մարմնի մէջ, ո՛վ Աստուած, ու կենդանի էակների խմբերը, ու Բրահմա Աստուծուն՝ նստած lotus ծաղկի վերայ, ու բոլոր Իմաստուններին ու բոլոր երկնային վիշապներին:

Քո բազմաթիւ բազուկներով, կրծքերով, երեսներով ու աչքերով տեսնում եմ քեզ բոլորովին անհուն երևոյթներով, ոչ վերջ, ոչ միջոց և ոչ սկիզբն եմ տեսնում, ո՛վ տիեզերական կան տէր, ո՛վ տիեզերական երևոյթ:

Կրակը, լոյսը, օրը, նոր լուսինը, այն վեց ամիսները՝ երբ Արևը հիւսիսումն է. ահա ժամանակը՝ երբ գնում են Բրահմայի մօտ բրահմայաճանաչ մարդիկ:

Ծուխը, գիշերը, վերջին լուսինը, հարաւի վեց ամիսները. ահա երբ գնում է Եօգին լուսնի պարունակի մէջ և յետոյ վերադառնում:

Ահա երկու յաւիտենական ճանապարհները, պայծառ կամ խաւար, հաւատալիք այս աշխարհի. մին գնում են անդառնալի, միւսը գնում են վերադառնալի:

Այս երկուսին ճանաչելով Եօգին չի վրդովւում. ուստի ամէն ժամանակ Եօգայով միացիր, ի՞նչ Արջունա:

Վեդայի ընթերցման, զոհի, ճգնութեան և ողորմութեան համար խոստացուած վարձատրութիւնները, այս բոլորը գերազանցում է Եօգին գիտութեամբ և գերադոյն հանգիստն է հասնում:

Այսեղ վերջանում է Բհագավադգիտայի ութերորդ գլուխը, որի անունն է Անբաթանիի եւ Գերադոյն Բրահմայի Եօգա:

Թ.

Կրիշնան խօսեց.

Այժմ ես քեզ կը բացատրեմ իր ամբողջութեամբ և իր մասերով այն խորհրդաւոր գիտութիւնը, որը սովորելով դու կազատուես չարիքից:

Դա գիտութեան թագաւորն է. դա գաղանիքների թագաւորն է. դա գերադոյն սրբագործութիւնն է, ներհայեցողութեամբ ըմբռնելի, օրինական, գործադրութիւնը հաճոյական, անսպառ:

Նորա օրինականութեանը չհաւատացող մարդիկ, ինձ չեն հասնում և ենթարկւում են մահուան յեղափոխութեանց:

Ե՛ս կազմեցի այս ամբողջ տիեզերքը՝ անտեսանելի ձևովս. իմ մէջ են պարունակւում բոլոր էակները. իսկ ես նոցա մէջ չեմ պարունակւում:

Բայց նաև էակները իմ մէջ չեն պարունակւում. տե՛ս Եօգայի գաղտնիքը. իմ հոգին էակների տաճին է, բայց առանց էակների մէջ պարունակուելու՝ էակների էութիւնն է:

Ինչպէս օգի մէջ պարունակւում է անդադար ամէն կողմից փչող մի մեծ քամի, այնպէս էլ բոլոր էակները պարունակւում են իմ մէջ. ըմբռնի՛ր այս:

Բոլոր էականները մտնում են իմ արարչականութեան մէջ
Կալպայի ¹⁾ վերջը. նրանց նորից Կալպայի սկզբին արձակում
եմ ես:

Իմ արարչականութեան մէջ անշարժ, արձակում եմ
հետզհետէ էակաների այս ամբողջութիւնը առանց իրենց կամ-
քին, միայն իմ արարչական ուժով:

Եւ ինձ այս գործերը չեն կաշկանդում. ես դուրս եմ
նոցանից և իրենցից կախուած չեմ:

Իմ՝ կարգադրութեամբ արարչականութիւնը ծնում է
շարժական և անշարժ իրերը. և այս պայմանով աշխարհը
դառնում է:

Արհամարհում են ինձ անզգամները՝ երբ մարդկային
մարմին եմ զգենում, իմ գերագոյն էութիւնը չճանաչելով՝
որ բոլոր արարածների հրամայողն է:

Ձուր յոյսեր, զուր գործեր, զուր գիտութիւն, խելա-
ցնորներ. Խաբշտասների և Ահուերաների ²⁾ խռովարար ուժի
տակ են:

Բայց մեծահոգի իմաստունները իմ աստուածային արար-
չականութեան հետեւում են, պաշտում են միայն իմ մասին
մտածելով, և ճանաչելով, ինձ իբր էակաների անայլայլ սկզբ-
բունքը:

Անդադար օրհնաբանում են ինձ, մաքառելով ու հաս-
տատուն մնալով իրենց ուխտի մէջ, պատւում են ինձ, պաշ-
տելով և յաւիտենական եօգայով ծառայելով:

Ուրիշներ գիտութեան զոհը զոհաբերելով՝ ինձ ծառա-
յում են՝ միութեանս ու պարզութեանս մէջ՝ երեսս դար-
ձրած ամենուրեք:

Ես պաշտումն եմ, ես զոհն եմ, ես մեռելոց պատա-
րաքն եմ, ես փրկութեան բոյսն եմ, ես օրհներգն եմ, ես
օծումն եմ, ես կրակն եմ, ես մատաղն եմ:

Հայրն եմ ես այս աշխարհի, մայրը, ամուսինը, պապը:
Ես վարդապետութիւնն եմ, սրբագործութիւնը, սրբազան
Օմը, Թեգը, Սաման և Եաջուրը:

Ճանապարհը, պահապանը, տէրը, վկան, օթեանը, ապա-
ւէնը, բարեկամը, ծնունդը, ջնջումը, հանգիստը, գանձը,
անմահ սերմը:

Ես եմ տաքացնում, ես եմ անձրեք պահում և տեղում.
անմահութիւնն ու մահը, էութիւնն ու անէութիւնն եմ ես,
ո՞վ Արջունա:

1) Հազարուոր տարիների մի դարաշրջան.

2) Սատանաների տեսակներ:

Վեդայագրքէտները Սոման ¹⁾ ըմպելով, մեղքերից քաւուած
և զոհը մատուցած՝ ինձ են համարում երկնային ճանապարհը:
Նոքա հասած ինդրա Աստուծոյ բնակարանը՝ ճաշակում են
գործախառնում աստուածային սնունդը:

Եւ երբ ճաշակել են այս ընդարձակ երկնային աշխարհից,
արժանիքներն սպառած, մահկանացուներն աշխարհն են դառ-
նում: Եւ այսպէս երեք օրինադրքերին հետևող մարդիկ՝ եր-
ջանկութեան ցանկանալով՝ ենթարկւում են վերագործներին:

Մարդիկ՝ որ առանց ուրիշ բանի վրայ մտածելու ծառա-
յում են ինձ և մնում են միշտ ինձ միացած, Խոգայի երա-
նութիւնն են ստանում ինձանից:

Եւ նոքա՝ որ ուրիշ աստուածութիւնից պաշտելով զո-
հում են հաւատքով լցուած, նոքա ինձ էլ զոհում են՝ թէև
հին օրէնքից դուրս:

Որովհետև բոլոր զոհերն էլ ես եմ հաւաքում, ես եմ
ընդունում: Բայց նոքա ինձ չեն ճանաչում իմ էութեամբս,
կրկին ընկնում են նոքա:

Աստուածապաշտները գնում են Աստուածներին, նախ-
նեաց պաշտողները գնում են նախնիքներին. դիւապաշտ-
ները գնում են դեերին. իսկ ինձ պաշտողները ինձ են գալիս:

Երբ մէկը ինձ մի տերև, մի ծաղիկ, մի պտուղ կամ մի
հեղուկ է ընծայում իբր պաշտամունք, ես ընդունում եմ
իբր սնունդ և բարեպաշտական ընծայաբերութիւն:

Ինչ անում ես, ինչ ուտում ես, ինչ զոհում ես, ինչ տա-
լիս ես, ինչ կրում ես, ո՞վ Կունտի՛ի որդի, նրանից արձ ինձ
ընծայաբերութիւն:

Բարի թէ չար պտղով՝ գործերի կապանքից դու կազատ-
ուիս, և հոգիդ անձնուրաց կերպով միացած Նոգային, ազատ,
կը գաս ինձ մօտ:

Նոյնն եմ ես բոլոր էակներն համար. ոչ ատելութիւն
ունիմ, ոչ սէր. բայց ովքեր պաշտում են ինձ՝ նոքա իմ մէջն
են և ես նոցա մէջ:

Նոյն իսկ ամէնից յանցաւորը երբ պաշտում է ինձ՝ ա-
ռանց ուրիշին մատուցանելու իր պաշտամունքը, նա լաւ
պիտի համարուի, որովհետև բարի ճանապարհն է բռնում:

Շաւտով նա կը լինի արդար, և յաւիտենական հանգիստը
կը գնայ: Ո՞վ Կունտի՛ի որդի, խոստովանի՛ր թէ ինձ պաշտողը
չի կորչի:

1) Զոհի ժամանակ բաժանուած ըմպելիքը՝ որ պատրաստւում է
զանազան ծաղիկներից եւ այլն:

Որովհետեւ ինձ ապաստանողները, մինչեւ իսկ եթէ մեղքի մէջ յղացուած լինին, կանայք, վայսիաներ, նոյն իսկ սուրբաները, գնում են գերագոյն ճանապարհը:

Ո՛ւր մնաց սուրբ բրահմանները և բարեպաշտ արքայական իմաստունները: Այս կորնչական ու ցաւալից աշխարհում զետեղուած, պաշտի՛ր ինձ:

Ի՛նձ յառիր միտքդ, ի՛նձ պաշտիր, ի՛նձ զոհիր և ի՛նձ պատուիր. և միայն ինձ տեսնելով ու ինձ միանալով, դու ի՛նձ կը հասնես:

Այսեղ վերջանում է Բնագով օղորհա՛յի իննեւորդ գլուխը, որի անունն է գիսութեանց քաղաքի ու գալսնիքների քաղաքի եօզա:

Ժ.

Կրիշնան խօսեց.

Լսի՛ր, ս՛վ մեծագօր, լսի՛ր իմ գերագոյն խօսքերս, որ ես քեզ ասելու եմ քո փրկութեան համար:

Ոչ աստուածների դասը և ոչ Մեծ Իմաստունները՝ չեն իմանում իմ ծնունդը, որովհետեւ ես եմ աստուածների և բոլոր Մեծ Իմաստունների սկիզբը:

Ով ինձ անծին և անսկիզբ գիտէ, և աշխարհի տէրը, նա անսխալ է մահկանացուների մէջ, և բոլոր մեղքերից քաւուած է:

Բանականութիւնը, գիտութիւնը, արագութիւնը, համբերութիւնը, ճշմարտութիւնը, սրբակեցութիւնը, խաղաղութիւնը, հաճոյքը, ցաւը, գոյացութիւնը, ջնջումը, երկիւղն ու ապահովութիւնը,

Քաղցրութիւնը, հոգու անդորրութիւնը, ուրախութիւնը, ճգնութիւնը, ողորմածութիւնը, փառքը, նախատինքը՝ էականների էութիւններն են, որոնք ինձնից են բաշխուած:

Եօթը Մեծ Իմաստունները, չորս Պա՛ւրվանները և Մանունները իմ մէջ էացած և իմ մաքով են ծնուած, և նոցանից աշխարհի մէջ մարդիկ:

Ով իմ այս կարողութիւնը և եօզան գիտէ էապէս, նա անդրդուելի եօգայով կապւում է անտարակոյս:

Ես եմ բոլորի սկիզբը, տիեզերքն ինձնից է ծագել. այսպէս մտածելով պաշտում են ինձ իմաստունները՝ գերագոյն էութեան կակից:

Իմ վրայ մտածելով, իմ մասին հաւաչելով, սովորեցնելով իրար, պատմելով ինձ անդադար, ուրախանում են և հրճւում:

Նոցա որ միշտ եօգայով միացած, ընծայում են ինձ ուրոյ զոհը, տալիս եմ բանականութեան եօգան, որով նոքա ինձ են հասնում:

Իմ ողորմածութեամբ և առանց իմ էութիւնից հեռանալու՝ ես նոցա միջից փարատում եմ տգիտութեան խաւարը, գիտութեան լուսաւոր ջահով:

Արջունան խօսեց.

Դուք էք գերագոյն բրահման, գերագոյն բնակարանը, գերագոյն օրրազործութիւնը, երկնային և յաւիտենական Ոգին, Սկընական աստուածութիւնը, անձին, տէր:

Քեզ խոստովանում են բոլոր իմաստասէները, երկնային իմաստունն Ննրագա, Ասիտան, Գէվալան, Վիմոան. այժմ ինձ ես յայտնում քեզ:

Այս բոլորը որ դու ինձ խօսեցիր, ընդունում եմ իբր ճշմարտութիւն. որովհետեւ ոչ աստուածները և ոչ Գանաւականները չգիտեն թէ ինչպէս դու տեսանելի ես դառնում:

Ինքդ միայն գիտես քեզ, ո՞վ մարդկանց վեհագոյնը, էակները՝ էակը, կենդանիների իշխան, աստուածների Աստուած, արարածների տէր:

Հաճի՛ր ինձ պատմել առանց ծածկելու այն երկնային առանձնայատկութիւնները, որոնցով դու պահում ես այս աշխարհները թափանցելով նոցա մէջ:

Ինչպէս կարող եմ ճանաչել քեզ, ո՞վ եօգի, մտքով միացած քեզ. քո ո՞ր էութիւններով դու ինձ մատչելի կը լինիս:

Պատմի՛ր ինձ երկար քո եօգան և քո կարողութիւնը, ո՞վ մարդկանց յաղթական, քո խօսքերն իմ ականջիս անյագելի ամբըրոսիա են:

Երբեման խօսեց.

Արդ Քեզ պատմեմ երկնային առանձնայատկութիւններս համառօտակի. որովհետեւ չկայ սահման իմ անհունութեան:

Ես բոլոր կենդանի էակներին մէջ գտնուող հոգին եմ. ես էակների սկիզբը, մեջոցը և վերջն եմ:

Աշխտիաների մէջ ես Վիշնուն եմ, Առւսաւոր մարմինների մէջ լուսապայծառ Արեգակը. Մարտաների մէջ Մարիճին եմ, Համաստեղութեանց մէջ Առսինը:

Վէգաների մէջ Սաման եմ ես, աստուածների մէջ Վանասական, զգայութեանց մէջ միտքը, էակների բանականութիւնը:

Ռուգբրանների մէջ Շանկարան եմ, Եաքչանների և Ռաքչանների մէջ հալստութեանց իշխանը, Վառոճանների մէջ Պանձալան եմ, լեռնագագաթների մէջ Մերուն:

Ես առաջին քահանայապետն եմ, գիտցի՛ր, ո՛վ Պրիթանյի յորդի, ես Վրհապատին եմ. զօրապետների մէջ Սկանդան, լճերի մէջ Ովկիանն եմ:

Մեծ իմաստունների մէջ Բհրգուն եմ ես. բառերի մէջ միակ անբաժանելին Ռ՛մ, զոհաբերութեանց մէջ լուռ աղօթքն եմ, լեռնաշղթաների մէջ Հիմալայան:

Բոլոր ծառերի մէջ թզենին, Աստուածային իմաստունների մէջ Նանդան. Երկնային երաժիշտների մէջ ձիտրաբաթան, որբերի մէջ Կապիլա ճգնաւորը:

Նժոյգների մէջ Ուճայշրաւան գիտցի՛ր ինձ՝ ծնած ամբրոսիայից, Այրա՛ւատան փղերի մէջ, մարդկանց մէջ իշխանաւորը:

Ձէնքերի մէջ կայծակն եմ, կովերի մէջ կամադհուն եմ. ես ծնիչ Կանդարպան եմ, օձերի մէջ Վանուկին եմ:

Անանտան եմ ես նահապետի մէջ, Վարունան եմ ջրային կենդանիների մէջ, նախահայրերի մէջ Արիամանն եմ, դատաւորների մէջ Նաման:

Պրահլադան եմ Դայտիանների մէջ, ժամանակն եմ չափերի մէջ, գաղանների մէջ վագրը, թռչունների մէջ վայնատէյան:

Մաքրիչ բաների մէջ քամին եմ. Ռաման եմ պատերազմիկների մէջ. ձկների մէջ մակարան եմ. գետերի մէջ Դանդէոր:

Արարչութեան մէջ սկիզբն եմ, միջոցը և վերջը, ո՛վ Արջունա. գիտութեանց մէջ Կերադոյն Հոգու գիտութիւնը, խօսողների համար ես խօսքն եմ:

Դրերի մէջ Այրն եմ. բաղադրեալ բառերի մէջ բարդութիւնը. ես անսահման ժամանակն եմ. ես Արարիչն եմ ամենատես:

Մահն եմ ամենակալ և կեանք ապրողայ էակների. իդական բառերի մէջ վառը, բախտ, պերճախօսութիւն, յիշողութիւն, սրամտութիւն, հաստատակամութիւն, համբերութիւն:

Ամմայի երգերի մէջ մեծ օրհներգն եմ. չափաբերութեանց մէջ գայատրին, ամիսների մէջ մանրագաշխրսան¹⁾ եղանակների մէջ գարունը:

¹⁾ Գրեթէ համապատասխանում է Հին Հայոց Մագաք Դոսիմիական ժայիս ամսին:

Խարերաների բախտն եմ եմ ես, նշանաւորներին շուքը, ես յաղթութիւնն եմ, խորհուրդն եմ, ճշմարտասէրների ճշմարտութիւնն եմ:

Վրշնիկ որդոց մէջ Վանսուդէվան եմ. Պանդալաների մէջ ինքդ եմ. մենակեացների մէջ Վյանսան եմ, բանաստեղծների մէջ Ուշանան:

Ճգնաւորների ճգնութիւնն եմ ես, կարգապահութիւնն յաղթականների, լռութիւնը գաղանիւրների մէջ, գիտութիւնը իմաստունների մէջ:

Ինչ բեղմնաւորութիւն կայ բոլոր էակների մէջ. այդ է՛ս եմ, Ա՛րջունա. որովհետեւ առանց ինձ գոյութիւն չէ կարող ունենալ ո՛չ մի բան, շարժական թէ անշարժ:

Վերջ չունին իմ երկնային գորութիւնները, ո՛վ Արջունա, և ես քեզ պարզեցի մի ամենատկար մասն իմ կատարելութեանց:

Ինչ որ կայ ընտիր, երջանիկ նաեւ գորաւոր, դա ծագել է իմ կարողութեան մի նշոյլից:

Բայց ինչո՞ւ քեզ այս բովանդակ գիտութեամբ ծանրաբեռնեւ, ո՛վ Արջունա. երբ ես հանգչեցրի ամէն ինչ իմ անձին մի մասնիկի վերայ, աշխարհը կազմուեց:

Այսեղ վերջանում է Բնագովարդութեան խոսքը, որի անունն է Գեոգոյնի Եօզան:

ԺԱ.

Արջունան խօսեց.

Գերագոյն Հոգու գիտութեան վեհագոյն գաղանիքը, որ դու ինձ բացատրեցիր իմ փրկութեան համար, վարատեց ինձանից իմ մոլորութիւնները:

Որովհետեւ ընդարձակօրէն լսեցի ևս էակների ծնունդն ու վախճանը ո՛վ Եօզ ծաղիկ աչքերով Աստուած, և քո անկորնչելի մեծանձնութիւնը:

Բայց ես ցանկանում եմ տեսնել, ո՛վ վեհագոյն տէր, քո անձնաւորութիւնը, այն ձևով որով նկարեցիր դու, ո՛վ մարդկանց գերագոյնը:

Եթէ դու մտածում ես թէ այս տեսիլքը ինձ մատչելի է, ո՛վ Եօզ այի տէր, այն ժամանակ ինձ ցոյց տու ք քեզ, քո յաւիտենական հոգին:

ԿԵՐԵՆԱՆ ԽՕՍԵՑ.

Տէս, ո՛վ Պրիթանյի որդի, տես իմ ձեռքը՝ հարիւրապատ-
աիկ ու հազարապատիկ զանազանեալ, երկնային, բազմադոյն
ու բազմապիսի:

Տես Ա՛գիտյաները, Վաստեաները, Ռուդրաները, երկու
Աշվինները, Մարուտները. բազմաթիւ անժանօթ այս հրաշա-
լեքները տես:

Ահա իր միութեան մէջ տես այս տիեզերքը շարժական
և անշարժ առարկաներով բովանդակուած իմ մարմնի մէջ և
ամէն ինչ որ դու տեսնել ես ցանկանում:

Բայց որովհետեւ դու ինձ չես կարող տեսնել քո մարմ-
նաւոր աչքերով, երկնային աչք կը տամ քեզ, և նայիր իմ
մէջ գերադոյն եօդային:

ՍԱՆՉՈՒՅԱՆ ԽՕՍԵՑ.

Այսպէս խօսելով մեծ եօդայի տէր Հարին, ցոյց տուաւ
Պրիթանյի որդուն իր փառահեղ վեհագոյն դէմքը:

Լի բազմաթիւ աչքերով ու երեսներով, բազմաթիւ ոքան-
չելի երեւոյթներով, բազմաթիւ աստուածային զարդարանք-
ներով, երկնային բազմաթիւ գէնքեր բռնած:

Աստուածային դրասանքներով ու զգեստներով, երկնա-
յին բոյրերով անուշաբուրուած, ամէն բանով հրաշալի, շող-
շողուն, անհուն, երեսն ամենուրեք:

Եթէ երկնքում յանկարծ ցոլանար հազար արեգակների
բոցափայլութիւնը, կարելի կը լինէր համեմատել այս մեծանձն
Աստուծոյ բոցափայլութեան հետ:

Այնտեղ Պանդուի որդին տեսաւ տիեզերքն ամբողջ և
միակ ու բազմապատիկ Աստուածների Աստուծոյ մարմնում:

Եւ այն ժամանակ ոարսափահար, մաղերը կանգնած,
հսկան ծռեց իր գլուխը և ձեռքերը միացնելով՝ խօսեց Աս-
տուծուն:

ԱՐՉՈՒՆԱՆ ԽՕՍԵՑ.

Տեսնում եմ բոլոր աստուածներին քո մարմնի մէջ, ո՛վ
Աստուած, ու կենդանի էակների խմբերը, ու Բրահմա Աս-
տուծուն՝ նստած lotus ծաղկի վերայ, ու բոլոր Իմաստուն-
ներին ու բոլոր երկնային վիշապներին:

Քո բազմաթիւ բազուկներով, կրծքերով, երեսներով ու
աչքերով տեսնում եմ քեզ բոլորովին անհուն երեւոյթներով,
ոչ վերջ, ոչ միջոց և ոչ սկիզբն եմ տեսնում, ո՛վ տիեզերա-
կան տէր, ո՛վ տիեզերական երեւոյթ:

Դու կրում ես խոյրը, լախար, մկունդը, ս՛վ լուսոյ լեռ՝
ամբողջովին շողշողուն։ հազիւ կարողանում եմ քեզ տեսնել
ամբողջապէս, որովհետեւ դու փայլում ես կրակի ու արեգա-
կան պէս քո անհունութեան մէջ։

Դու Անբաժանելին, գերագոյն Բժրունելին ես. դու այս
տիեզերքի գերագոյն գանձարանն ես. դու անկորնչելին,
Օրէնքն անխախտ պահողն ես. դու յաւիտենական Առնական
ուժն ես։

Անսկիզբ, անմիջոց և անվերջ, անվախճան զօրութեամբ,
անսահման բազուկներով, հայեացքդ նման Լուսնի ու Արե-
գական, ես տեսնում եմ քեզ. քո բերանը նուիրական Կրակի
փայլն ունի, քո ջերմութեամբ տաքանում է այս տիեզերքը։

Երկնքի և երկրի միջոցը ու բոլոր սահմանները հասնում
ես դու մէն մենակ. տեսնելով քո այս գերնական ու զար-
հուրելի երևոյթը երեք աշխարհները դղրդում են, ս՛վ մե-
ծանձն Աստուած։

Ահա աստուածային էակների խումբը քեզ է դիմում.
ոմանք երկիւղից ձեռները միացրած ազօթում են լուռ.
«Սուսոսի՛» գոչում են Մեծ Ժմաստուններն ու սրբերի խմ-
բերը և օրհնարանում են քեզ լիհ օրհներգներով։

Ռուդրաները, Ագիտիաները, Վասուները, Սուրյաները,
Վիշվաները, Երկու Աշվինները, Մարուտաները, Ուշմապաները,
Գանդհարվաների, Նաղշաների, Ասուրաների ու Սիդդհաների
խմբերը նայում են քեզ, և սարսափում են բոլորը։

Այդ մեծ երևոյթը՝ բազմաթիւ բերաններով ու աչքե-
րով, բազմաթիւ բազուկներով, սրունքներով ու ոտներով,
բազմաթիւ կրծքերով, բազմաթիւ ահարկու առամներով՝
տեսնում են աշխարհներն ու զարհուրում, ու ես ևս։

Երբ Քեզ տեսնում եմ ամպածրար, բազմաթիւ գոյներով
երփներանդ, բերանարաց ու կայծակնացայտ աչքերով, ցնցում
է հոգիս ու չեմ գտնում իմ հանդիսան ու դադարը, ս՛վ
Վիշնու։

Երբ տեսնում եմ քո կերպարանքը ոպանալից առամ-
ներով ու նման աշխարհաբորբոք հրդեհին, էլ բոլորտիրս չեմ
տեսնում ու իմ ուրախութիւնը հեռանում է. օգնի՛ր ինձ,
ս՛վ Աստուածների տէրը, ս՛վ Աշխարհների բնակարանը։

Բոլոր այս Գհրաարաշարայի որդիները իշխանների բա-
նակներով, Բհիշման, Գհրանան ու այս կառապանի որդին մեր
զինուորների զօրապետների հետ,

Գնում են դահավիժուէլ քո զարհուրելի, քո սպառ-
նալից առամներով զինուած բերնի մէջ. ոմանք ջարդուած

գլուխներով առկախ մ'նուժ են առամ'ներեդ մէջտեղ:

Ինչպէս ջրերի բազմաթիւ հեղեղները Ուկիւնն են դիմում ուղղակի, այնպէս այս հսկաները տարւում են դէպի քո կայծակնացայտ կերպարանքը:

Ինչպէս դէպի հրավառ բոցն է թռչում թիթեռը յարաճուն արագութեամբ՝ մահանալու համար, այնպէս արագ վազում են էակները քո բերանում կորչելու համար:

Ուտում է քո լեզուն ամբողջ աշխարհները և քո բոցավառ կոկորդը կլանում է նրանց. քո լոյսով լցնում ես ամբողջ տիեզերքը և քո ճառագայթները տաքացնում են նրան, ո՛վ Վիշնու:

Պատմի՛ր ինձ, ո՛վ ես դու, ո՛վ ահեղ երևոյթ. օրհնութիւն քեզ, ո՛վ գերագոյն Աստուած. օգնի՛ր ինձ, ես ցանկաւ նուժ եմ իմանալ քո սկզբնական էութիւնը, որովհետեւ ես չեմ նախատեսում քո ընթացքը:

Կրիշնան խօսեց.

Եո ժամանակն եմ աշխարհակործան. ծերացած եկել եմ ես աշխարհները ջրջելու. բացի քեզանից չպիտի մնայ ոչ ոք այս երկու բանակների զինուորներին:

Ուստի վե՛ր կաց, փափք որոնիր. յաղթահա՛վիր թշնամիներեդ և ձեռք բեր ընդարձակ տէրութիւնը. եւ՛ վճռել եմ նրանց կորստաւոր. դու եղիր միայն իմ գործիչը:

Դրոնային, Բհիշմային, Ջայադրաթային, Կարնային և ուրիշ պատերազմիկների ես զրկել եմ կեանքից. սպանի՛ր նրանց, մի՛ խռովիր. կռուի՛ր և դու պիտի յաղթես քո սուրբներին:

Ասնջ սյան խօսեց.

Երբ լսեց գանգրահեր Աստուծու այս խօսքերը, ձեռքերը միացրած, թաղակիր մարտիկը երկրպագեց երկիւղածութեամբ Կրիշնային և այսպէս առաց նրան զոդդոջուն, զարհուրած ու փոփոալով:

Արջունան խօսեց.

Այո՛, ո՛վ գանգրահեր Աստուած, քո անունով աշխարհն հրճում է և հպատակում. Ռաիջաները սարսափահար փախչում են. բոլոր Սիդդհաների խմբերը երկրպագում են:

Եւ ինչո՞ւ չպաշտէին քեզ, ո՛վ մեծանձն, քե՛զ՝ աւելի յարգելի քան Բրահմանը, առաջին արարիչ, անվախճան, Աստուածների տէր, Աշխարհի բնակարանը, քե՛զ անբաժանելի աղբիւր էութեան և անկոթեան:

Դու առաջին աստուածութիւնն ես, առաջին առնա-

կան այժմ, դու այս տիեզերքի դերագոյն գանձարանը. դու գիտունն ես, դու գիտութեան առարկան ես, դերագոյն ընակարանն ես. քեզնից է այս Տիեզերքը, ո՞վ անհունակերպ Աստուած:

Գու. ես Վայոլեն, Եաման, նուիրական հուրը, Վարու- նան, Իուսինը. դու Արարչապետ և նախահայր. փառք, փառք քեզ հազարապատիկ, և դարձեալ կրկին փառք, փառք քեզ:

Փառք քո ներկայութեան և քո յետնից, փառք քեզ ամենայն տեղ, ո՞վ Տիեզերական. անհուն զօրութեամբ և անսահման կարողութեամբ դու. տիեզերքն ընդգրկում ես. դու տիեզերական ես:

Եթէ քեզ կանչել եմ այսպէս ասելով. «էյ, Կրիշնա, էյ Եանդուի որդի, էյ բարեկամ», եթէ չեմ ճանաչել քո վեհա- փառութիւնը յանդգնութեամբ կամ նախանձով,

Եթէ բարկացրել եմ քեզ խաղալիս, պոռոյտում, պառ- կած, նստած կամ ուտելիս, մենակ կամ այս պատերազմիկ- ների առաջ, ներքի ինձ, ո՞վ անսահման Աստուած:

Գու. Հայրն ես աշխարհի, շարժական և անշարժ առար- կաների, դու աւելի պատուական ես քան հոգևոր ուսու- ցիչը. ոչ ոք չկայ քեզ հաւատար. ո՞վ կարող է դէպահանցել քեզ երեք աշխաշհներում, ո՞վ անսահման Վեհափառութիւն:

Աստի իոնաշհելով ու երկրպագելով քո առաջ, ես քո շնորհն եմ աղերսում, ինչպէս հայրը որդուն, ինչպէս բարե- կամը բարեկամին, սիրահարը սիրուհուն, այնպէս օգնի՛ր ինձ, ո՞վ Աստուած, ո՞վ Ոչհնարդ:

Անտեսանելուդ տեսնելով՝ ես հրճուել եմ, բայց երկիւ- դով ստորաւիում է միտքս, ցոյց տուր ինձ, ո՞վ Աստուած, քո առաջին երեսիթը. օգնի՛ր ինձ, ո՞վ Աստուածների տէրը, ո՞վ աշխարհի ընակարանը:

Խոյրով, լախտով ու միտնդով ուղում եմ տեսնել քեզ նորից. վերստացի՛ր քո չորեքթևեան կերպարանքը, ո՞վ բազ- մաբազուկ ու բազմաձև Աստուած:

Կրիշնան խօսեց.

Իմ շնորհուն է, ո՞վ Արջունա և Եօդայի զօրութեամբ, որ դու տեսար իմ դերագոյն կերպարանքը, շողշողուն, տիեզե- րական, անսահման ու սկզբնական, որ ոչ ոք քեզանից առաջ չէր տեսել:

Ոչ Վէդան, ոչ Զոհր, ոչ Ընթերցումը, ոչ ողորմութիւնը, ոչ արարողութիւնները, ոչ խիստ ճգնութիւնները, չէին կա-

րող ինձ տեսանելի ընծայել աշխարհում ոչ մէկին բացի քեզանից, ո՛վ Կուրուի որդի:

Մի՛ վախենար, մի՛ յուզուի՛ր տեսնելով իմ այս սոսկալի կերպարանքը, անեղիկեղ ու զուարթ՝ դու նորից իմ առաջին կերպարանքը պիտի տեսնես:

Ասեցայան խօսեց.

Այսպէս խօսելով Վահուդէվան ցոյց տուաւ Արջունային իւր միւս կերպարանքը, և հանդատացրեց նորա երկեղը՝ նորից երեւելով իր սովորական կերպարանքով:

Արջունան խօսեց.

Տեսնելով այժմ քո մարդկային անխռով կերպարանքը, նորից ինձ դառնում եմ և մտնում ընտանիքի մէջ:

Կրիշնան խօսեց.

Իմ այս դժուար տեսանելի կերպարանքը, որ տեսար դու, աստուածներն անգամ անդադար ցանկանում են տեսնել: Բայց ոչ վեդաներով, ոչ ճգնութեամբ, ոչ ողորմածութեամբ և ոչ զոհերով տեսանելի չեմ դառնում ես այնպէս՝ ինչպէս տեսար դու:

Անվերջ պաշտումով միայն, ո՛վ Արջունա, կարելի է ճանաչել ինձ այս ձևով, տեսնել իմ էութեամբ, թափանցել իմ մէջ:

Ով դործում է ինձ համար, իմ դերագոյնն է ճանաչում, ինձ է պաշտում միայն, ով չունի ցանկութիւն կամ ատելութիւն դէպի կենդանի էակները, նա գալիս է ինձ մօտ:

Այստեղ վերջանում է Բհագավտդի-դաշի բասնրմկերորդ գլուխը, որի անունն է Տիեզերական կերպարանքի Տեսիլք:

ԺԲ.

Արջունան խօսեց.

Նոքա որ Եօգայով միացած միշտ ծառայում են քեզ, և նոքա որ Անբաժանելուն և Անտեսանելուն են հետևում, ովքեր աւելի լաւ են ճանաչում Եօգան:

Կրիշնան խօսեց.

Նոքա որ ինձ նուիրելով իրենց միտքը, անդադար ծա-

ռայոյում են ինձ լի ջերմեւանդ հաւատքով, նոքա ինձ համար
գերազոյն եօղիներն են:

Բայց նոքա որ ծառայում են անբաժանելի, անտեսա-
նելի, անզգալի, ամենուրեք, անիմանալի, գերազոյն, անշար-
ժելի, անփոփոխելի էակին,

Ու նուաճելով իրենց զգայարաններն ու հաւասարակշիռ
պահելով իրենց միտքը՝ հրճւում են համայն էակների բարօ-
րութեամբ, նոքա էլ հասնում են ինձ:

Ծանր կը լինի իրենց պատիժը, եթէ իրենց միտքը հե-
տապնդի Անտեսանելուն. որովհետեւ Անտեսանելու ընթացքը
գոյութեամբ է մարմնաւոր իրերով ըմբռնել:

Նոքա որ բոլոր գործերից ինձ համար հրաժարուած են
ու անդադրում եօղայով միմիայն ինձ են նայում ու ծա-
ռայում,

Նրանց ես փրկում եմ շուտով մահուան հետեանքների
այս ծովից, որովհետեւ նոքա ինձ են հետեւում մտքով:

Ինձ յանձնիր ուրեմն քո միտքը, իմ մէջ հանդստացրու
քո բանականութիւնը, և դու շուտով կը բնակուես իմ մէջ
անտարակոյս:

Եթէ դու քո միտքը ինձ յանձնել չես կարող հաստատուն
կերպով, այն ժամանակ յարատեւութեան եօղայով աշխատիր
ինձ հասնել:

Եթէ յարատեւութեան ևս ընդունակ չես, գործի՛ր միշտ
իմ կամքով, և գործելով միայն ինձ հաճելի գործեր, դու կը
հասնես կատարելութեան:

Իսկ թէ այս էլ անկարող ես կատարել, դարձիր եօղային.
և բոլոր գործերից հրաժարելով՝ ընկճի՛ր քեզ:

Որովհետեւ յարատեւութիւնից աւելի լաւ է գիտութիւնը.
գիտութիւնից աւելի բարձր է հայեցողութիւնը. հայեցողու-
թիւնից աւելի բարձր է գործերից հրաժարումը. և հրաժարու-
մի մօտ է երջանկութիւնը:

Ոչ մի էակի համար տաւելութիւն չունեցող, բարի և
ողորմած, առանց ետսիրութեան, առանց պատուախնդրու-
թեան, հաճոյրի և նեղութեան առաջ անտարբեր, համբե-
րատար,

Ուրախ, միշտ եօղայով միալած, անձնիշխան, հաստա-
տակամ, միտքն ու բանականութիւնը ինձ յարած և ինձ ծա-
ռայող անձը իմ սիրելին է:

Նա, որ չի խռովում աշխարհը և նա, որին աշխարհը
չի խռովում, նա որ ուբախտութիւնից, բարկութիւնից, երկիւ-
ղից և սարսափից ազատ է, նա էլ իմ սիրելին է:

Առանց յետին մտքի, մտքուր, ճարտար, անտարբեր, անխռով, բոլոր ձեռնարկած գործերից հեռու և ինձ ծառայող մարդը նոյնպէս իմ սիրելին է:

Ով չի հրճուում, չի ատուում, չի տխրում, չի ցաւում, յաջողութեան ու անյաջողութեան մէջ անտարբեր է ինձ ծառայելու համար, նա իմ սիրելին է:

Անտարբեր դէպի թշնամին ու բարեկամը, դէպի պատին ու անպատուութիւնը, դէպի ցուրտը, տաքը, հաճոյքն ու ցաւը, ազատ ցանկութիւնից,

Անտարբեր դէպի նախատանքն ու գովասանքը, լուսկեաց, միշտ գոհունակ, անտուն, հաստատամիտ, ինձ ծառայող մարդը իմ սիրելին է:

Բայց նոքա որ անմահութեան խնճոյքին, ինչպէս ասացի, մասնակցում են ջերմեռանդ հաւատքով և իմ մասին միայն մտածելով, ահա իմ ամենասիրելի ծառաներս:

Այստեղ վերջանում է Բնագովադգիրսի հասցերկուերորդ գլուխը՝ որի անունն է Պատշաճութիւնի Եղանակ:

ԺԳ.

Կրօնական խօսեց.

Այս մարմինը կոչւում է Նիւթ, և ով այդ գիտէ՝ նրան գիտունները կոչում են Նիւթի գաղափար:

Նիւթի գաղափարը ես եմ ամէն Նիւթի մէջ էլ. Նիւթի և Նիւթի գաղափարի գիտութիւնը իսկական գիտութիւնն է իմ համար:

Թէ ի՞նչ է Նիւթը, իր յատկութիւնները, իր ձեւափոխութիւնները, իր ծագումը, թէ ի՞նչ է միտքը և իր կարողութիւնները—զրանք ուղիորդ ինձանից համառօտակի:

Իմաստունները շատ անգամ զանազան երգերի մէջ երգել են այս Նիւթերն առանձին առանձին, նոյնպէս Բրահմանական Սոփտրաների մէջ, որոնք խօսում են ու դատում պատճառների մասին:

Էակաների մեծ ուղբունքները, Եսը, բանականութիւնն ու վերացականը. ասանեմէկ զգայարանները և հինգ զգայութիւնները,

Ցանկութիւնը, ատելութիւնը, հաճոյքը, ցաւը, երեւակայութիւնը, հասկացողութիւնը, խորհրդածութիւնը,—ահա Նիւթը համառօտակի իր ձեւափոխութիւններով միասին:

Համեստութիւնը, անկեղծութիւնը, հեղուցութիւնը, համբերութիւնը, շիտակութիւնը, ուսուցչի յարգանքը, մարքոսութիւնը, հաստաառկամութիւնը, անձնիշխանութիւնը,

Զգայութեան մէջ անտարբերութիւնը, անհասկերութիւնը, ինչպէս և ծնունդը, մահը, ծերութիւնը, հիւանդութիւնը, ցաւն ու մեղքը նկատի ունենալը,

Անձնազոհութիւնը, չյարուել զաւակի, կնոջ, տան և այլ իրերի, մշտնջենաւոր հոգեկան անտարբերութիւն ցանկալի և անցանկալի բաներում:

Ինձ հետ միշտ եօղայով միացած հաստատուն ու ջերմեռանդ պաշտամունքը, մենաւոր մի վայրում առանձնութիւնը, աշխարհային հաճոյքներից քաշուելը,

Գերադոյն հոգու յաւիտենական ճանաչողութիւնը, ճշմարտութեան ճանաչողութեամբ ձեռք բերուած հայեացքը, ահա ինչն է կոչւում զիտութիւն. սրա հակառակը ազիտութիւնն է:

Ինչ որ պէտք է գիտենալ ևս կը պատմեմ քեզ, որք սովորելով անմահութիւն է ճաշակում մարդ: Անսկիզբն ու գերադոյն Բրահման ոչ էութիւն է, ոչ անէութիւն:

Ամենուրեք ձեռք ու սաք, ամենուրեք աչք, զլուխ ու գէմք, ամենուրեք լսողութիւն, նա մնում է աշխարհում՝ ամեն ինչ ընդգրկելով:

Բոլոր զգայական կարողութիւնները լուսաւորում է նա՝ առանց ոչ մի զգայարան ունենալու. ամէնրից անջատ, ամէնքի նեցուկն է նա. առանց եղանակի՝ թափանցում է բոլոր եղանակները:

Էականերից ներս է ու դուրս է, շարժուն է ու անշարժ, իր անօրութեան պատճառով աննկատելի է թէ՛ հեռուից և թէ՛ մօտից:

Առանց բաժանուելու էակաների մէջ՝ բաշխուած է նա նոցա մէջ. էակաների տածիչ՝ նրանց նա իր մէջ է ծծում ու արձակում:

Լուսաւորների լոյսն է խաւարից այն կողմ: Գիտութիւն, զիտութեան առարկայ, գիտութեան նպատակ, ամէնքի սըրտումն է նա:

Ահա այս է նիւթը, Գիտութիւնը և զիտութեան առարկան համառօտակի բացատրած: Իմ ծառան սովորելով սրանք՝ իմ էութեանն է հասնում:

Գիացիր թէ Բնութիւնն ու Առնական զօրութիւնը՝ անսկիզբն են երկուսն էլ. փոփոխութիւններն ու եղանակաւորումները ընտի թիւնից են ծագում:

Մարմնաւոր գործողութեան մէջ գործիչ պատճառը բնութիւնն է. Առնական զօրութիւնը հաճոյքն ու ցաւն զգացող պատճառն է:

Որովհետեւ Առնական զօրութիւնը բնութեան մէջ մնալով զգում է բնութիւնից ծնած եղանակաւորութիւնները, ուստի ձգտելով այս եղանակաւորումներին՝ մի բարի կամ չար արգանդում ծնւում է:

Հանդիսաւոր ու աղգարար, ածիչ, զգացող, մեծագոյ տէր, գերագոյն հոգի բնակուած մեր մարմնում. ահա գերագոյն Առնական զօրութիւնը:

Ով ճանաչում է Առնական զօրութիւնը, բնութիւնն ու իր եղանակաւորութիւնները, ինչ պայմանի մէջ էլ լինի, նա այլ ևս չի վերածնիլ:

Ոմանք տեսնում են Հոգին իրանց անձում ու իրանց անձի համեմատ. ուրիշներ բանապաշտ ինքնահայեցողութեան Եօդայով, ուրիշներ Գործի Եօդայով:

Իսկ ուրիշներ անդէտ լինելով՝ սովորում են ուրիշներից ու գործադրում. սոքա բոլորը Աստուածային գիտութեան անձնատուր՝ ազատում են մահուանից:

Երբ ծնւում է մէկը՝ շարժուն կամ անշարժ, գիացիր թէ նա Նիւթի և Նիւթի գաղափարի միացումից է աւանջանում:

Ով հաւատարմապէս բոլոր էակների մէջ տարածուած է ընդունում այս գերագոյն սկզբունքը, և նոյա կրօնաստի ժամանակ անխորոհա, նա ճիշտ է տեսնում:

Միշտ նոյն և ամէն տեղ ներկայ համարելով այս սկզբունքը, նա չի մեղանչում ինքն իրան և մտնում է գերագոյն ճանապարհ:

Ով մտածում է թէ բնութիւնը գործողութեանց գործիչ պատճառն է միշտ, և իր անձը անգործ է, նա ճիշտ է մտածում:

Ով էակների անհատական էութիւնը միութեան մէջ է ընդունում և նրանից է համարում նրա զարգացումը, նա դէպի Բրահման է գնում:

Անսկիզբ ու աւանց եղանակաւորութեանց, այս անայլալեւի գերագոյն Հոգին, թէ և մարմնի մէջ, բայց չի գործում, չի ապականւում:

Ինչպէս ամենուրեք տարածուած օդը իր անօրութեան պատճառով չի ապականւում, նոյնպէս ամենուրեք մարմնի մէջ բնակուած հոգին չի ապականւում:

Ինչպէս Արեգակը մեն-մենակ լուսաւորում է ամբողջ այս աշխարհը, այնպէս էլ Գաղափարը լուսաւորում է Նիւթը:

Ովքեր Նիւթի ու Նիւթի գաղափարի տարբերութիւնը, և

ընտելեան կապանքից էակաների ազատումը տեսնում են զիտութեան աչքերով, նոքա գնում են Գերագոյնին:

Այստեղ վերջանում է Բնագալաղգի՝սա՛յի հասնեբեբեռոզ զլուխը՝ Թի անունն է Նիւրի եւ Նիւրի գաղափարի արբերութեան եօզա:

ԺԴ.

Կրիեման խօսեց.

Գերագոյն գիտութիւնն եմ պատմում քեզ, գիտութիւնների ծայրագոյն գիտութիւնը, որը ճանաչելով բոլոր մենակեացները՝ գերագոյն երջանկութեան գնացին:

Այս գիտութեան մէջ թափանցելով ու իմ զրութեան խելամուտ լինելով՝ Ստեղծագործութեան օրը նրանք չեն վերածնում և մարմինների քայքայումը նրանց չի վնասում:

Իմ արդա՝ զը մեծ Բրահման է. այստեղ սերմը դնում եմ ես. և դա բոլոր էակաների էութիւնն է դառնում:

Բոլոր արդանդների մէջ ծնունդ տաւծ մարմիններից, Բրահման է մեծագոյն արդանդը և ես բեղմնաւ օրիչ հայրը:

Ճշմարտութիւն, բնազդ ու խաւար. ահա՛ ընտելեանից ծնած եղանակաւ ու մները, որ մարմնին են կապում անայլալի հոգին:

Այնտեղ ճշմարտութիւնը իր անապահանսութեամբ փայլուն ու աւուղջ կապում է նրան երջանկութեան ու գիտութեան ձգտումով:

Բնազդը՝ ազդակից կրքին ու ծնած ախորժակից, կապում է հոգին գործի ձգտումով:

Իսկ խաւարը՝ ծնած ագիտութիւնից ու խռովիչ բոլոր հոգիների, կապում է նրան ապշութեամբ, ծուլութեամբ և թմրութեամբ:

Ճշմարտութիւնը քաղցրութեամբ է զրաւում, բնազդը գործով, իսկ խաւարը ծածկելով գիտութիւնը՝ զրաւում է ապշութեամբ:

Ճշմարտութիւնը ծնում է բնազդի ու խաւարի պարտութեամբ. բնազդը խաւարի ու ճշմարտութեան պարտութեամբ. իսկ խաւարը ճշմարտութեան և բնազդի պարտութեամբ:

Երբ բոլոր դաներից մեր մարմնի մէջ թափանցում է գիտութեան լոյսը, այն ժամանակ ճշմարտութիւնը հասունանում է:

Գործերի ձեռնարկութեան և առաջ տանելու եռանդը, անհանգստութիւնը, տենչանքը ծնւում են հասունացած բնազդից:

Կուրուութիւնն ու անփութութիւնը, ապշութիւնն ու մոլորութիւնը ծնւում են հասունացած խաւարից:

Երբ ճշմարտութեան հասուն ժամանակ քայքայումն հասնում է մահկանացուի մարմնին, այն ժամանակ ճշմարտատեաների անարատ աշխարհն է գնում նա:

Երբ բնազդի ժամանակ է քայքայւում, վերածնւում է գործունեաների մէջ, իսկ երբ խաւարի մէջ է քայքայւում, վերածնւում է, մի ապուշի արգանդում:

Բարի գործի պտուղը կոչւում է ճշմարիտ ու անարատ բնազդի պտուղը դժբախտութիւնն է. խաւարի պտուղը աղիտութիւնն է:

Ճշմարտութիւնից ծագում է փիտութիւնը, բնազդից եռանդը, խաւարից ապշութիւն, մոլորութիւն ու ափսոսութիւն:

Երկինք են գնում ճշմարտագէտները. միջավայրում մնում են բնազդականները. իսկ ստորաքարշ խաւարամիտները դժոխքն են գնում:

Ով իմանում է թէ այս երեք Յատկութիւններից դուրս ուրիշ ազդակ չկայ, և թէ ժրն է այս Յատկութեան գերագոյնը, նա իմ էութեանն է դիմում:

Ով անցել է մարմնի մէջ ու մարմնից առաջացած այս երեք Յատկութիւնները, նա ծնունդից, մահից, ծերութիւնից ու ցաւից ազատւում է և անմահութիւնը ճաշակում:

Արդունան խօսեց.

Ի՞նչն շտապ ունի նա որ այս երեք Յատկութիւններն անցել է, ի՞նչպէս է վարւում, և ի՞նչպէս է անցնում այս երեք յատկութիւնները:

Կրիսնան խօսեց.

Ով ստուգութիւնը, գործունէութիւնը և մոլորութիւնը չի ատում նոցա ներկայութեան ժամանակ, և նրանց բացակայութեան ժամանակ նրանց չի ցանկանում,

Եւ իբր օտար հանդիսատես է լինում Յատկութեանց զարգացման և չի յուզւում, ու «Յատկութիւններն ընթանում են» ասում ու հեռանում է հանդարտութեամբ,

Անտարբեր դէպի հաճոյքն ու ցաւը, անձնիշխան, որ նոյն է համարում հողի կոյսը, քարն ու ոսկին, հաւասարակշիռ

ուրախութեան ու տխրութեան, դժբախտների ու անարգանքի, փառուի ու նախատինքի, բարեկամի ու թշնամու մէջ, որ իւր բոլոր գործերից հրաժարուած է, նա անցել է Յատկութիւնները:

Ով որ ինձ անփութիւնքի պաշտամունքի եօգայով ծառայում է, նա այս երեք Յատկութիւններն անցնելով Բրահմայի էութեան հաղորդակցում է:

Որովհետեւ բնակարանն եմ ես Բրահմայի, ու անայլաչաւ անմահութեան, ու յաւիտենական արդարութեան, ու անվախճան երջանկութեան:

Այստեղ վերջանում է Բհագավադգիտանի տասնութերորդ գիրքը. որի անունն է երեք Յատկութեանց տարբերութեան եօգա:

ԺԵ.

Կրիշնան խօսեց.

Սրմատները բարձր, ճիւղերը ցածր մի թզենի կայ յաւիտենական. բանաստեղծութիւններ են նրա տերէնները. ով նրան ճանաչում է՝ նա լիզայադէտ է:

Դէպի ցածր ու դէպի բարձր տարածւում են իւր ճիւղերը, որոնց ոտները Յատկութիւններն են, ու ճիւղերը Չգայութիւնները. դէպի ցածր երկարած արմատներ էլ ունի, որոնք գործերով կապկապում են մարդկանց աշխարհում:

Ոչ նրա ձենն են ըմբռնում այս աշխարհում, ոչ վերջը, ոչ սկիզբը և ոչ տեղը: Երբ մէկը այս հաստարմատ թզենին անտարրերութեան ամուր սրով կտրէ,

Թող այն ժամանակ փնտռէ այն անդառնալի վայրը՝ ուր գնացողը էլ չի դառնում: Դէպի այդ սկզբնական Առնական զօրութիւնը ե՛ս եմ առաջնորդում, որից առաջացել է աշխարհի վաղեմի բղխումը:

Նուաճելով հպարտութիւնը, մոլորութիւնը, միտքը յառած Դերագոյն Հոգուն, հեռացրած ցանկութիւնները, ընկճած հաճոյքի և ցաւի կռիւը, դնում է անմոլոր դէպի յաւիտենական ճանապարհը:

Արեւը չէ, Լուսինը չէ, Կրակը չէ որ լուսաւորում է այն վայրը, ուր գնացողը էլ չի դառնում. այնտեղ իմ գերագոյն բնակարանն է:

Իմ մի՛ սառնիկո՛՛ կենսատու և յաւիտենական՝ կեանքի այս աշխարհում իրեն է քաշում միտքը և բնութեան մէջ գտնուած լից զգայականները:

Երբ մարմին է զգենում կամ նրան թողնում այս Գերագոյն տէրը, իր հետն է վերցնում նրանց իր ընթացքի ժամանակ, ինչպէս քամին որ լցւում է բոյրերով:

Լսելիքը, աչքը, շոշափելիքը, ճաշակելիքը, հոտոտելիքը և միտքը դրաւելով, նա զգայութեանց հետ հաղորդակցում է:

Հեռանալիս, ներկայ լինելիս ու գործելիս էլ պղտոր մաքերը չեն տեսնում նրան այս Յատկութեանց մէջ. տեսնում են միայն նրանք, ովքեր ունին գիտութեան աչքեր:

Ովքեր կատարում են ետգան, նրան տեսնում են իրենց անձի մէջ ներկայ. բայց ովքեր կատարում են ու դեռ չեն կատարելագործուած, ընդունակ չեն նրանց տեսնելու:

Այն լոյսը որ ցոլանում է արեգակից ըովանդակ աշխարհի վրայ, այն որ վայլում է Լուսնի ու Կրակի մէջ, գիտցիր թէ դա իմ լոյսն է:

Երկրի մէջ թափա՛ցելով՝ էակներին ես պահում եմ իմ ու ժով, անուցանում եմ խոտերը ընդոր ու դառնում քաղցմահամ սոմա:

Ես ջերմութիւն դառնալով շնչող մարմիններն եմ թափանցում և ներշնչութեան ու արտաշնչութեան միանալով իւրացնել եմ տալիս չորս անունդները:

Ես ընակում եմ բոլոր սրտերի մէջ. ինձնից են յիշողութիւնը, գիտութիւնը և դաաողութիւնը: Բոլոր Վեգաների մէջ ես եմ ճանաչելին. Վեգաների հեղինակ ու վեղայագէտ եմ ես:

Ահա երկու Առնական զօրութիւններն աշխարհում. մին բաժանելի և միւսն անբաժանելի. բաժանելին բոլոր էակների մէջ է, անբաժանելին կոչւում է գերադոյն:

Բայց կայ և մի ուրիշ գերադոյն Առնական զօրութիւն՝ անայլայլ ու գերիշխան, որ Գերագոյն Հոգի է կոչւում, որ երեք աշխարհները թափանցելով պահում է նրանց:

Եւ որովհետեւ ես գերադանցում եմ բաժանելին ու նոյն իսկ Գերադոյն անբաժանելին, ուստի աշխարհում ու Վեղայում կոչում եմ Գերագոյն Առնական Զօրութիւն, նա ամենագէտ է և պաշտում է ինձ իր ամբողջ էութեամբ:

Ահա ամենախորհրդաւոր վարդապետութիւնը բացառեցի քեզ. ով այս գիտէ, իմաստուն է և նրա գործը լրանալու է:

Այսեղ վերջանում է Բնօգտալուրդի՛ստի՛ Տասնհինգերորդ գլուխը, որի ամուսն է Գերագոյն Առնական Զօրութեան հասնելու եօգա:

ԺԶ.

ԿՐԻՔՆԱՆ ԽՍՈՒՆԳ.

Անկեղծութիւն, ճշմարտասիրութիւն, զիտութեան Եօ-
ղայի մէջ յարատեւութիւն, սղորմածութիւն, չափաւորու-
թիւն, բարեպաշտութիւն, մասխոհութիւն, օղնութիւն, շի-
տակութիւն,

Խաղաղասիրութիւն, ճշմարտախօսութիւն, քաղցրու-
թիւն, հրաժարում, անդորրութիւն, բարեորաութիւն, դու թ
դէպի էակները, հանգստութիւն, հեղութիւն, աժօթխածու-
թիւն, լըջութիւն:

Կորով, համբերութիւն, հաստատակամութիւն, մաքրու-
թիւն, վարուեցողութիւն, համեստութիւն, ահա առատա-
ծային ծնունդի յատկութիւնները, մի վ Ռհմրատա:

Կեղծաւորութիւն, հպարտութիւն, ունայնամտութիւն,
բարկութիւն, վայրահաջութիւն, աղիտութիւն. ահա Ստու-
րայի ծնունդի յատկութիւնները:

Ստուածային ծնունդը ազատութիւն է. Աստուրայի ծը-
նունդը գերութիւն: Մի՛ տխրիր, դու առատաճային ծնունդ
ես, մի Պաճնդուի որդի:

Երկու բնութիւն կայ աշխարհում. առտուածային ու
Ստուրաների. առտուածայինը ընդարձակօրէն բացատրեցի.
այժմ՝ լսիր Ասուրաներին:

Ծագումն ու վերադարձը չեն ճանաչում Աստուրայի մար-
դիկ. ոչ մաքրութիւն, ոչ կանոն, ոչ ճշմարտութիւն կայ
նրանց մէջ:

Առանց ճշմարտութեան, առանց կարգաւորութեան ու
առանց նախաինամութեան են համարում աշխարհը, և թէ
իրը մին միւսն առաջացնող երեւոյթներ ու դիպուածի ար-
դիւնք:

Այս հայեացքի մէջ մնալով, կորցնում են իրենց հոգին,
նուառապնում բանականութիւն, անցաւոր են լինում վայ-
րադ գործերի և թշնամի են մարդկային սեօին:

Անձնատուր անյադ ցանկութեանց, հաւուած խարեւա-
յութեան, ունայնամտութեան ու յիմարութեան, մուրաբու-
թիւնը տանում է նրանց վատ արարչների ու ներշնչում պեղծ
ցանկութիւններ:

Խորհուրդները դատում, մահը կարծում են ամէն բանի
վերջ. և աշխատում են յագեցնել իրենց ցանկութիւնները,
նրանց մէջ տեսնելով ամէն բան:

Հարիւրաւոր յոյսերով ու անյուսուածիւններով կաշկանդուած, ցանկութեան ու բարկութեան անձնատուր, աշխատում են իրենց ցանկութիւնը վայելելու համար, անարդար միջոցներով հարստութիւն ղեզել:

«Ահա ինչ շահեցայ այսօր. ու պիտի վայելեմ այս ինչ հաճոյքը. այս սւնեմ, շուտով պիտի ունենամ այս ինչ օգուտն էլ:

«Սպանեցի այս ինչ թշնամուս. պիտի սպանեմ նաև միւսներին. իշխան եմ ես. ես հարուստ եմ. երջանիկ եմ ես, հզօր, ուրախ:

Պերձ ու մեծ իշխան եմ. ո՞վ կայ ուրիշ ինձ նման. զոհեր կանեմ, ողորմութիւն կտամ, հաճոյք կը վայելիմ: Ահա ինչ են ասում՝ տգիտութեամբ մոլորուած:

Բազմաթիւ մտածմունքներով խռովուած, մոլորութեան ցանցի մէջ պաշարուած, զբաղուած, իրենց ցանկութեան վաշելումով, ընկնում են պիղծ դժոխքի մէջ:

Ինքնավստահ, յամառ, հարստութեան սնամիտութեամբ և յիմարութեամբ լցուած, զոհում են անուանական ողջակէզներ՝ կեղծաւորութեամբ և առանց ծիսակն օրինակատարութեան:

Եսասէր, կատաղի, սնամիտ, ցանկութեան ու բարկութեան հպատակ, անարդոււմ են ինձ իրանց անձի և ուրիշների մարմնի մէջ՝ ստորացնելով:

Գրանց, այդ քինախնդիր, կատաղի ու ստորին մարդկանց ևս ներում եմ մահուան յարախոխութեանց մէջ, թշուառ օրէն վերածնելու ուսանանների արդանդներում:

Սատանաների արգանդի մէջ ընկնելով, թափառելով ծնունդից ծնունդ ու ինձ երբեք չհասնելով՝ վեղապէս դնում են դժոխքի ճանապարհը:

Նրեք են դժոխքի դռները, որով կորչում են մարդիկ. ցանկասիրութիւն, բարկութիւն և ազահութիւն. այս երեք քին պէտք է թողնել:

Այն մարդը՝ որ հեռացել է խաւարի այս երեք դռներից, քայլում է դէպի անձի փրկութիւնը և գնում է գերազոյն ճանապարհը:

Բայց ով Սրէնքի պատուէրներից հեռանալով հեռւում է իր ցանկութեանց կատարման, նա կատարելագործութեան չի հասնում, ոչ էլ երջանկութեան, ոչ էլ գերազոյն ճանապարհին:

Թող Սրէնքը քո հրամայողը լինի ու սովորեցնի ինչ պէտք է գործել ու ինչ չպէտք է գործել: Սովորելով օրէնքի պա-

տուեցանները թոյլատրած գործերը, հաճի՛ր գործել այս աշխատհում:

Այսեղ վերջանում է Բնագալադի՛սա՛լի աստվեցեբորդ զլուխը՝ որի անունն է Ասուածայի՛ն ու սասանայալի սն ձնեղեան արեբորեան նօգա:

ԺԷ.

Արշունան խօսեց.

Նոքա որ Օրէնքի պատուէրներէց հեռանալով զոհում են լի հաւատքով, ո՛րն է նոցա տեղը, ո՛վ կրիշնա, արդեօք ճշմարտութեան, ընադդի ու խաւարի՞:

Կրիւնա խօսեց.

Երեք տեսակ հաւատք կայ մարդոց մէջ, որոնք ընածին են ու ծաղում են ճշմարտութիւնից, քաղդից կամ խաւարից:

Ամէնքի ճշմարտութեան կերպորանքը հաւատքն է, ո՛վ Բհմբատա. և հաւատացեալ մարդը ինչպէս հաւատքն է, այնպէս էլ ինքն է:

Ճշմարտութեան մարդիկ զոհում են առտուածներին. ընադդի մարդիկ նաքշաներին ու Ռաջառաներին. խաւարի մարդիկ ոգիներին և ուրուականներին:

Մարդիկ որ առանց Օրէնքը պահելու, անում են խիստ ճշնութիւններ, ու սնափառ, եռասէր և ցանկութեամբ, կրքով ու կատաղութեամբ լի են.

Ու չարչարում են իրենց մարմնի մէջ ընտկում ինտուկան սկզբունքերն անմտութեամբ, ինչպէս և ինձ՝ որ նոցա ներքին մարմնում եմ ընաղում, գիտցիր թէ՛ նոքա սատանայամբա են:

Մարդոց համեմատ կան և երեք տեսակ հաճելի սնունդ, զոհ, ճշնութիւն ու սղորմութիւն. լսի՛ր նրանց ասարեբութիւնը:

Կեանք, ճշմարտութիւն, ուժ, առողջութիւն, երջանկութիւն և ուրախութիւն աւելացնող համեղ, քաղցր, հոտաւորն ու անուշ սնունդները ճշմարտութեան մարդոց են հաճելի:

Կծու, թթու, աղի, շատ տաք, դառն, տախի, տաքացնող սնունդները կրքի մարդկանց հաճելի են, իբր ցաւով ու հիւանդութեամբ բեղուն:

Հնացած, անհամ, հոտած ու նոյն խել դէն գցած ու կեղտոտ սնունդները խաւարի մարդկանց հաճելի են:

Առանց վարձատրութեան սպասելու և Օրէնքի համաձայն կատարուած զոհը, որ զոհում է սուրբ դօրժը կատարելու մօքով, ճշմարտութեան զոհն է:

Իսկ այն որ վարձատրութեան սպասելով ու կեղծաւորութեամբ է զոհում, գիտցիր թէ դա ցանկութեան զոհն է:

Առանց օրէնքի, առանց մատաղ բաժանելու, առանց աղօթքի, ժամոցի ու հաւատքի արուած զոհը խաւարի զոհն է:

Աստուածներին, Բրահմաններին, ուսուցչին և ուսումնականին մատուցուած յարգանքը, մաքրութիւնը, շիտակութիւնը աստուածավայել ընթացքն ու հեղութիւնը՝ մարմնի օգնութիւն են կոչուում:

Մեղմ, ճշմարտախօս ու քաղցրահամբոյր լեզուն և կրօնական դրքերի ընթերցումը խօսքի ճգնութիւն են կոչում:

Մտքի անդորրութիւնը, խաղաղութիւնը, լռութիւնը, անձնազսպութիւնը, անձի մաքրութիւնը, ահա թէ ինչը մտքի ճգնութիւն է կոչում:

Ջերմեռանդ հաւատքով ու առանց վարձատրութեան արուած՝ մարդկանց այս երեք ճգնութիւնները ճշմարտութեան ճգնութիւնն են:

Փառքի, պատուի ու յարգանքի համար կեղծաւորութեամբ արուած ճգնութիւնը կոչում է կրքի ճգնութիւն, որ անհաստատ է ու անստոյգ:

Մոլորուած երեւակայութեամբ իր անձի չարչարման և ուրիշների կորուստի համար արուած ճգնութիւնը՝ խաւարի ճգնութիւնն է:

Իսկ ողորմութեան համար, առանց փոխարէն վճարի, ու տեղի, ժամանակի և արժանիքի համեմատ արուած ողորմութիւնը ճշմարտութեան ողորմութիւնն է:

Իսկ փոխադարձ վճարի կամ վարձատրութեան յոռով և իբր ակամայ արուած ողորմութիւնը ընադդի ողորմութիւնն է:

Տեղին, ժամանակին ու արժանիքին անհամաձայն, առանց ակնածութեան և վիրաւորելի ողորմութիւնը խաւարի սղորմութիւնն է:

«Օ՞մ. Նա. Բարին» ահա Բրահմայի երեք աշխարհային անուանակոչութիւնները. Բրահմանները, Վէդաներն ու Ջոհնրանից ստեղծուեցին հնապէս:

Աւստի Օ՞մ բառը չարտասանած, օրինական զոհը, ողորմութիւնն ու ճգնութիւնը չեն անում երեք աստուածաբանները:

Նա. այսպէս են ասում նրանք՝ որ առանց սպասելու վարձատրութեան, զոհի, ճգնութեան ու ողորմութեան զանազան գործեր են կատարում, ազատութեան փափագով:

Ճշմարտութիւնը և ուղղամտութիւնը բարի են կոչում. և գովելի ամէն գործ նոյնպէս բարի է կոչում:

Զոհի, ճգնութեան ու ողորմութեան մէջ յարատեւութիւնը բարի է կոչում:

Առանց հաւատքի զոհը, ողորմութիւնը, ճգնութիւնը, գործը չար է կոչում, և ոչինչ է թէ այս ու թէ այն աշխարհում:

Այսօր ոլերգանում է Բնագովադգի՛նայի Տասնրօքերորդ զլուխը՝ որի անունն է Հաւաքի երեք թեսակների եօզա:

ԺԸ.

Արշունաց խօսեց.

Անձնութեան ու հրաժարման խելութիւնը ցանկանում եմ գիտենալ, ո՞վ մեծագոր, գանգրահեր սպանող կեշիների:

Կրիւնաց խօսեց.

Ցանկութեան գործերից հրաժարուելը՝ բանաստեղծները կոչում են հրաժարում. և ամբողջ գործերի վարձատրութիւնը թողնելը գիտունները կոչում են անձնուրացութիւն:

Այն գործերը որ պէտք է թողնել, մեղք են համարում իմաստունները. իսկ զոհի, ողորմութեան և ճգնութեան գործերը պէտք է թողնել ասում են ուրիշները:

Լսիր այժմ իմ պատուէրը անձնուրացութեան մասին, ո՞վ Բհարատաների լաւագոյնը: Անձնուրացութիւնը, ո՞վ առիժատիրո, երեք տեսակ է լինում:

Զոհի, ողորմութեան և ճգնութեան գործերը պէտք է թողնել, այլ կատարել. որովհետեւ Զոհը, ողորմութիւնը և ճգնութիւնը սրբագործութիւններ են իմաստունների տեսլով:

Նթէ ցանկութիւնը և վարձատրութիւնը թողել են, թող կատարեն այս գործերը. ահա իմ գերագոյն պատուէրն ու կամքը:

Անհրաժեշտ գործից հրաժարումը գործադրելի է. յիմարութիւն է մի այսպիսի անձնուրացութիւն և խուարի ծնունդ:

Ով «գժուար է» ասելով ու մարմնական յոգնութիւնից

վախենալով թողնում է գործը, նա հրաժարում է բնագոգով միայն և իր անձնուրացութիւնից ոչ մի օգուտ չի քաղում:

«Պիտի անեմ»• այսպէս պէտք է ասել ու կատարել անհրաժեշտ գործը, մի Արջունա• իսկ ցանկութիւնից և վարձատրութիւնից հրաժարուել՝ դա անձնուրացութեան հենց էութիւնն է:

Ոչ անյաջող գործից է հրաժարւում և ոչ յաջողակին հետևում նա՝ որ էսպէս անձնուրաց է, ինչացի և կասկածանքից ազատ:

Որովհետև մարմնաւոր մարդը բոլոր գործերից հրաժարուել անկարող է• բայց երբ գործերի վարձատրութիւնից հրաժարւում է, նա գործում է անձնուրացութիւն:

Անցանկալի, ցանկալի և սոցա խառնուրդը• ահա մասնունից յետոյ անանձնուրացների գործերի երեւակ վարձատրութիւնը• բայց ոչ նաև անձնուրացների:

Սովորել ինձանից այն հինգ սկզբունքները, որ Ապացուցական Վարդապետութիւնը յայտարարում է իբր պարունակուած ամէն գործի մէջ:

Սուրեն Ուղղութիւնը, Սղդակը, Գործիքը, Կանադան Զանքերը և հինգերորդ Սոսուածային միջամտութիւնը:

Գործով, խօսքով ու խորհրդով կատարուած ամէն մարդկային գործ, բարի թէ չար, յիշեալ հնգից է առաջանում:

Այս ճշմարիտ լինելով, ով միակ գործիչը իրան է կարծում ազիտութեամբ, նա սխալ է մտածում:

Ով ետսէր չէ, և որի բանականութիւնը խաւաւած չէ, սպանելով հաղորձ այս պատերազմիկներին, սպառող չէ ու մեղաւոր չէ:

Գիտութիւնը, նրա առարկան ու նրա նիւթը• ահա գործողութեան երեք շարժիչները• Գործարանը, Գործողութիւնը և Գործիչը• ահա և գործողութեան երեք հասկացողութիւնները:

Գիտութիւնը, Գործողութիւնը և Գործիչը երեք տեսակ են իրենց Յատկութեանց համեմատ• Յատկութեանց վարդապետութիւնը բացատրած լինելով, լսիր այժմ նրանց հետևութիւնը:

Այն գիտութիւնը որ բոլոր կենդանի էակների մէջ ցոյց է տալիս միակ անփոփոխելի էակը, բաժանեալ իրերի մէջ անբաժանելի, դա ճշմարիտ գիտութիւնն է:

Այն գիտութիւնը որ բոլոր կենդանի էակների մէջ տեսնում է իւրաքանչիւր էակի անհատական բնութիւնը, նա բնագոգական զիտութիւնն է:

Իոկ այն անակզբունք, ն՝ղ ու անճիշտ գիտութիւնը որ նայում է գործին իբրեւ ընդարձակ առանձին երեսոյթ, կոչուում է խաւարի գիտութիւն:

Անհրաժեշտ, բազմից ազատ գործը, կատարուած ցանկութիւնից և ասելութիւնից ազատ մարդուց և առանց վարձատրութեան ակնկալութեան, ճշմարտութեան գործն է:

Իր ցանկութեան գոհացման և իր եսի համար ու բազմութիւ ջանադրութիւններով կատարուած գործը կրքի գործ է:

Առանց հետեանքը, շահը կա՞մ վնասը և իր ուժերը կըշռելո՞ւ՝ յիմարութեամբ ձեռնարկուած գործը խաւարի գործ է:

Կրքից ու եռասորութիւնից ազատ, հաստատակամութեամբ և արևութեամբ օժտուած, յաջողութիւնից ու անյաջողութիւնից անտարբեր գործիչը ճշմարտութեան գործիչ է:

Կրքոտ, գործերի վաճառութիւնն ակնկալող, ազատ, մասնակար, անհաջուր, հաճոյքի ու ցաւի անձնատուր գործիչը կրքի գործիչ է:

Անընդունակ, ստորին, յամուռ, խորեւոր, անհոգ, դատարկապարտ, ծոյլ, նստակեաց ու քարշ եկող մարդը խաւարի գործիչ է:

Այժմ լսիր մօքի և յարատեութեան երեք բաժանումները, ամբողջապէս ու մանրամասնաբար, համաձայն անհատական յատկութեանց:

Այս միտքը որ գործելու և չգործելու, երկիւղի և ապահովութեան, կապանքի և ազատութեան ծագումն ու վերջը գիտէ, ճշմարտութեան միտք է:

Այն միտքը որ արդարն ու անարդարը, գործելու ու չգործելու բանը շիտի կերպով գիտէ, բնազդական միտք է:

Այն միտքը որ անարդարութիւն է կոչում տրդարութիւնը, խաւարով պատած է և հակառակն է անում ամէն բանի, խաւարի միտքն է:

Այն յարատեութիւնը որ մօքի, սրտի ու զգայարանների գործերը բռնում է անփոփոխելի եօղացով, ճշմարտութեան յարատեութիւնն է:

Այն յարատեութիւնը որ հետևում է բաբուն, գեղեցիկն ու օգտակարին, բնազդամբ ձգտելով գործերի վարձատրութեան, դա կրքի յարատեութիւնն է:

Այն անմիտ յարատեութիւնը՝ որ քնից, երկիւղից, տրտմութիւնից, սոսկումից ու յիմարութիւնից չի ազատում մարդուն, խաւարի յարատեութիւնն է:

Այժմ լսիր հաճոյքի երեք տեսակները. երբ մէկը վարժութեամբ հրճում է և վերջ գնում իր տխրութեան,

եւ երբ ինչ որ սկզբում թոյն էր՝ դարձնում է յետոյ նեկտառ, այն ժամանակ իր հաճոյքը կոչւում է ճշմարիտ, իբր ծնած իր մտքի ներքին անդորրութիւնից:

Այն հաճոյքը որ ծնում է զգայարանների և զգալի իրերի յարաբերութեամբ. և սկզբում նման է նեկտառի ու յետոյ թոյնի, դա կրքի հաճոյքն է:

Այն հաճոյքը որ սկզբում և իր հետեւանքներն մէջ հոգու խռովութիւն է միայն, անգործութեամբ, ծուլութեամբ և մոլորութեամբ դարբացած, դա խաւարի հաճոյքն է:

Ոչ երկրի վրայ, ոչ երկնքում առատութեան մէջ չկայ մի էութիւն որ բնութիւնից առաջացած այս երեք յատկութիւններից ազատ լինէր:

Բրահմանների, Կշատրիանների, Վայսիանների և Սոլտրանների մէջ պաշտօնները բաժանուած են իրանց բնական յատկութեանց համեմատ:

Խաղաղութիւնը, ժուժկալութիւնը, ճգնութիւնը, մաքրութիւնը, համբերութիւնը, շիտակութիւնը, գիտութիւնը, գիտելիքները և առտուածածանօթութիւնը Բրահմանի բնածին պաշտօնն է:

Կտրճութիւն, կորով, հաստատակամութիւն, ճարպիկութիւն, կռուի մէջ աներկիւղութիւն, ողորմութիւն, վարչականութիւն. ահա Կշատրիայի բնածին պաշտօնը:

Երկրագործութիւն, խաշնապահութիւն, վաճառականութիւն վայսիայի բնածին պաշտօններն են: Իսկ ծառայեւ միւսներին Սոլտրայի բնածին պաշտօնն է:

Այն մարդը որ ինչ որ էլ լինի իր պաշտօնը, գոհ է նրանից, հասնում է կատարելութեան: Այժմ լսիր թէ ինչպէս մարդ իր պաշտօնից գոհունակութեամբ կատարելութեան է հասնում:

Իր գործերով պատուելով նրան որից ծագել են էակները և որից այս բոլոր տիեզերքն է կազմուած, հասնում է մարդ կատարելութեան:

Աւելի լաւ է սեփական ոտորին պաշտօնը ուրիշի բարձր պաշտօնից. բնածին պաշտօնի գործերը կատարելով մարդ չի մեղանչում:

Բնածին պաշտօնը նոյն իսկ եթէ չարիքով միացած լինի, չպէտք է թողնիլ. որովհետեւ ամէն գործ չարիքով պաշարուած է, ինչպէս կրակը ծխով:

Սիրտը կապանքներից ազատ, ամէն ժամանակ անձնիշխան ու ցանկութիւնները վանած մարդը հանգստի գերագոյն կատարելութեան է հասնում անձնուրացութեամբ:

Ճայրագոյնը. դու իմ սիրելին ես և իմ խօսքերը քեզ օգտակար կը լինին:

Մտածի՛ր ինձ, պաշտի՛ր ինձ, գոհի՛ր ինձ, օրհնի՛ր ինձ, և դու ինձ կը հասնիս. իմ խոստումը ճշմարիտ է և դու իմ սիրելին ես:

Թո՛ղ ըստ օտար պաշտամունքները, և միայն ինձ ապաստանիր. և քեզ ըստ մեղքերից կը փրկեմ. մի՛ ախրիր:

Մի՛ պսոսմի՛ր իմ այս խօսքերս նրանց՝ որ անժուժկալ են, անկրօն են. որ չեն ուղում լսել, որ ինձ ուրանում են:

Բայց նա որ իմ այս գերագոյն գաղտնիքներս իմ ծառաների մէջ տարածում է, մատուցանելով ինձ գերագոյն պաշտամունքը, նա ինձ պիտի գայ անտարակոյս:

Ոչ ոք չի կարող մարդկանց մէջ սրանից աւելի հաճելի գործ կատարել, և ուրիշ ոչ ոք երկրի վրայ չի կարող աւելի սիրելի լինել ինձ:

Ով կարգայ այս մեր սրբազան խօսակցութիւնը, գիտութեան զոհը մատուցած պիտի լինի ինձ. այդ է իմ միտքը:

Եւ այն հաւատացեալ մարդը՝ որ առանց հակառակում թեան լսում է նրան, նա էլ քաւում պիտի երթայ մաքրակենցաղ երանեալների աշխարհը:

Արդեօք լսեցի՛ր այս ըստը, մի՛ Պրիթայի որդի, քո ունեւուն մարդ. և արդեօք տգիտութեան խռովութիւնները անհետացան քեզ համար:

Արջունան խօսեց.

Կորաւ խռովութիւնը. ես սաացայ սրբազան աւանդութիւնը քո շնորհիւ, մի՛ Աստուած. ես անվրդով եմ այժմ. տարակոյսս փարատուած է. ես կը կատարեմ քո խօսքերը:

Սանգուպան խօսեց.

Եւ ես Վանուդուայի և Պրիթայի մեծահոգի որդու այս վեհագոյն խօսակցութիւնը լսում էի փշաքաղուած:

Վանուայի շնորհիւ լսելով ես Եօդայի այս գերագոյն գաղտնիքը՝ Եօդայի տէր Կրիշնայից պատմուած:

Ո՛ր թագաւոր, ես յիշում եմ, յիշում եմ անդադար Արջունայի և Կրիշնայի այս գերագոյն խօսակցութիւնը, և հրճում եմ ընդմիշտ ընդմիշտ:

Եւ երբ յիշում եմ, յիշում եմ Հարիի այն գերբնական երևոյթը, ես մոռում եմ քարացած ու հրճում եմ անվերջ անվ

Այնտեղ ուր է Եօգայի տէրը՝ Կրիշնան, այնտեղ ուր է
Պրիթայի աղեղնաւոր որդին, այնտեղ է և երջանկութիւնը,
յաղթութիւնը, վրկութիւնը, հաստատակամութիւնը: Այս է
իմ հաւատքը:

Այսեղ վերջանում է Բհագավադգի՛տա՛յի տասնութերորդ
գլուխը, որի անունն է Հրաժարման ու Անձնութեան Եօգա:

Այսեղ լրանում է Բհագավադգի՛տա՛ն:

Շուրհամ աստու սարվաջադատամ
(Երջանիկ թող լինին բոլոր էակները)



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

| էջ | տող | սխալ | ուղիղ |
|----|------|-----------------------------------|--------------------------------|
| 4 | 11 | պանդուխ | Պանդուխ |
| | 15 | Նուեռուդհանա | Նուեռուդհանա, |
| 5 | 3 | կուրունների | Կուրունների |
| | 6 | բուրբը | բուրբ՝ |
| | 18 | Դերշտադհումա | Դերշտադյումա |
| | 18 | Սանհակի | Սանյակի |
| | 20 | սաօբհադրայի | Սաօբհադրայի |
| | 25 | կապկադրոշ | կապկադրօշ |
| | 6 ն. | Սանջայիան | Սանջայան |
| 6 | 10 | զգացումած | զգածումած |
| 7 | 8 | խառնութիւնը | խառնակութիւն |
| | 4 ն. | զգացումած | զգածումած |
| 8 | 7 ն. | է չէ | չէ |
| 9 | 9 ն. | , | , |
| | 8 ն. | անճառելի | անճառելի, |
| | 3 ն. | ծնում | ծնում |
| | 2 ն. | ծնի. ինչո՞ւ | ծնուի. ինչ որ |
| 10 | 4 | Իբր | Իբրև . |
| | 5 ն. | վայսիարներ | վայսիաներ |
| 11 | 20 | նրա | նոցա վարձատրութեան. մի՞ դորժիր |
| | 23 | առաջ | և տնյաջողութեան առաջ |
| 12 | 4 | հանգչելի | հանգչելիս, |
| | 7 | երջանիկ | երջանիկ, |
| | 9 | մէջ, | մէջ, ուրախութիւնից ազատ է |
| | | | յաջողութեան մէջ, |
| | 17 | է | է: |
| 14 | 1 ն. | (ծանօթութիւնը տանել նախորդ երեսը) | |
| 17 | 19 | դիմանում | դիմում |
| 19 | 15 | լով | լով և |
| | 17 | զգան | զգաս |
| | 8 ն. | անջանտումած | անջատումած |
| 23 | 4 | մենակ | մենակ, |